



Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի
 ափամերձ տարածքի 12-րդ փողոց 57, 58 և 59 հողամասեր
 հասցեում ցանկապատի կառուցման ՇՄԱԳ հաշվետվություն

Շրջակա միջավայրի վրա
 ազդեցության գնահատում
 2024թ. օգոստոս

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
 ՇՈՂԱԿԱԹ ԳՅՈՒՂԻ ԱՓԱՄԵՐԶ ՏԱՐԱԾՔԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑ 57,
 58 և 59 ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՍՑԵՈՒՄ ՑԱՆԿԱՊԱՏԻ
 ԿԱՌՈՒՑՄԱՆ**



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
 (ՇՄԱԳ) ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Կատարող՝

«Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն՝

Վ. Թևոյան



Երևան - 2024թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	3
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ	3
3.	ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ	4
3.1	Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման հիմքը	8
4.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	14
4.1	«Մևան» ազգային պարկի ավիամերձ հատվածի ռելիեֆը	16
4.2	Մևանա լիճ և «Մևան» ԱՊ	17
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	19
5.1.	Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը	19
5.2.	Սեյսմիկա և երկրաբանություն	20
5.3	Հիդրոերկրաբանություն	21
5.4.	Կլիմա և օդային ավազան	21
5.5	Մթնոլորտային օդ	24
5.6.	Աղմուկ և թրթռում	27
5.7.	Համայնքի սոցիալական նկարագիրը	28
5.8	Հողային ռեսուրսներ	30
5.9	Ջրային ռեսուրսներ	30
5.10	Բուսական և կենդանական աշխարհ	36
5.10.1	Բուսական աշխարհ	36
5.10.2	Կենդանական աշխարհ	38
5.11.	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	40
5.12.	Պատմամշակութային և բնության հուշարձաններ	40
5.13.	Բնության հուշարձաններ	43
6.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ	44
6.1	Ջրամատակարարում և կոյուղի	49
7.	ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	49
7.1.	<<Ոչ մի գործողություն>> այլընտրանքային տարբերակ	49
7.2.	Ծրագրի առավելությունները	49
8.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	49
8.1	Մթնոլորտային օդ	50
8.2.	Ջրային ռեսուրսներ	52



8.3. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	52
8.4 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ	53
8.5 Աղբահեռացում	54
8.6 Բնապահպանական և սոցիալական ազդեցությունները.....	54
8.7 Պատմամշակութային հուշարձաններ	55
8.8 Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում	56
8.9 Աշխատանքի անվտանգություն և առողջություն	56
8.10 Հակահրդեհային միջոցառումներ.....	57
8.11 Բարեկարգում և կանաչապատում	58
9. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՄԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	58
10. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ	60
11. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	62
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	68
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ.....	72
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ	73
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՏԵՂԵԿԱՆՔ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	79



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվող գործունեության անվանումը	Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի ափամերձ տարածքի 12-րդ փողոց 57, 58 և 59 հողամասեր հասցեում ցանկապատի կառուցում
Նախատեսվող գործունեության նպատակը	Նախատեսվող գործունեության նպատակն է ներկայացվող հողատարածքի ցակապատումը, ինչպես նաև մետաղական դարպասների տեղադրումը
Ձեռնարկող	«Դ ՎԵՆՉՈՒՐՍ» ՓԲԸ
Նախատեսվող գործունեության հասցեն	ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Ճամբարակ, Շողակաթ գյուղի ափամերձ տարածքի 12-րդ փողոց, 57, 58 և 59 հողամասեր
ՇՄԱԳ հաշվետվության մշակող	«Քոնսեկոարդ» ՍՊԸ

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Նախատեսվող գործունեության նպատակն է բարեկարգել Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում գտնվող ափամերձ գոտու հատվածը՝ ներկայացվող տարածքը շրջափակելով ցանկապատով և տեղադրելով մետաղական դարպասներ: Հողամասեր N 57, 58 և 59-ում կառուցապատում իրականացնելու իրավունք է տրվել «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից մինչև 2032թ.-ի նոյեմբերի 16-ը: Ներկայացվող տարածքը վարձակալության հիմունքով հանձնված է «Դ ՎԵՆՉՈՒՐՍ» ՓԲ ընկերությանը: Նշված տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 8,254 հա, որը բաժանված է երեք մասի (վկայականները ներկայացված են Հավելված 3-ում): Ներկայումս, նշված տարածքում չի իրականացվում որևէ գործունեություն: Տարածքը ամայի է և ներկայացված գործունեության արդյունքում չեն կառուցվելու այլ շինություններ: Ներկայացվող գործունեության արդյունքում ընդհանուր տարածքի վիճակը կլինի ավելի բարեկարգ և ապագայում հնարավորություն կլինի կազմակերպել բացօդյա միջոցառումներ:

Համաձայն նախագծի՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից պայմանագրային հիմունքով տրամադրված տարածքում նախատեսվում է բարեկարգել՝ շրջափակել ցանկապատով և տեղադրել մետաղական դարպասներ:



Նշված ցանկապատը և դարպասները բաղկացած են լինելու մետաղական ցանցից և մետաղական խողովակներից: Մանրամասները ներկայացված են Գլուխ 5-ում:

Ներկայումս, նշված տարածքը հիմնականում ամայի է, ափամերձ հատվածում կա որոշակի ծառաթփային բուսականություն (հիմնականում՝ եղևնիներ, չիչխանի թփեր) և ցանկապատի ու դարպասների տեղադրման ընթացքում դրանք չեն վնասվելու:

3. ԲԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

➤ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014թ., վերջին փոփոխությունը՝ 2023թ.) (այսուհետ՝ Օրենք) կարգավորում է նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատումները (ՇՄԱԳ): Համաձայն օրենքի լիազոր մարմինը՝ շրջակա միջավայրի նախարարությունը իրականացում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, տրամադրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:

➤ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006թ.) սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

➤ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը (1998թ.) սահմանում և կարգավորում է իրավական և քաղաքականության հիմքերը ՀՀ տարածքում՝ պատմամշակութային անշարժ հուշարձանների, պատմական միջավայրի պահպանության և օգտագործման համար, կանոնակարգում է պահպանության և օգտագործման իրավահարաբերությունները:

➤ ՀՀ Հողային օրենսգիրքը (2001թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպական իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

➤ «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.) -սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող



բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

➤ «Բուսական աշխարհի մասին» (1999 թ.) ՀՀ օրենքի նպատակը բուսական աշխարհի, կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Կարգավորում է ՀՀ բույսերի պահպանության պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է նաև էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:

➤ «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի (2000 թ.) նպատակը կենդանական աշխարհի պահպանության ապահովումն է: Կարգավորում է կենդանական աշխարհի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:

➤ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» (27.11.2006թ.) օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

➤ «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը (15.05.2001թ.) կարգավորում է Սևանա լճի, նրա ջրհավաք ավազանի և տնտեսական գործունեության գոտու էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սահմանում է Սևանա լճի, որպես Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները:

➤ «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» ՀՀ կառավարության որոշումը (18.12.2008թ.) սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ առանձնացված՝ Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության



Էկոլոգիական գոտիներում ընդգրկված տարածքները, ըստ կառուցապատման ռեժիմների, տարանջատվում են միմյանց հարող հաջորդական ենթագոտիներով:

➤ «ՀՀ ջրային օրենսգիրքի» (2002թ.) նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է: Սահմանում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության պարտավորությունները, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակման կարգը, պետական ջրային կադաստրի և մոնիթորինգի, ջրային ռեսուրսների օգտագործման թույլտվություն տրամադրող համակարգերի ստեղծումը, անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործումը, ջրի որակի չափանիշները, հիդրոլոգիական կառուցվածքների շահագործման անվտանգության խնդիրները, ջրային ռեսուրսների պահպանություն և պետական վերահսկողությունը: Ապահովում է հանրության համար համապատասխան տեղեկատվության մատչելիությունը:

➤ «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006թ.) և «Հայաստանի հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (21.12.2015թ.) ՀՀ օրենքը կարգավորում են Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները, ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները, էլնելով ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման համար հիմնական միջոցներից մեկը հանդիսանալու, դրա մատչելիության ապահովման նախապայմաններից:

➤ «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի (2005թ.) նպատակը մարդու բարեկեցության, հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման, տնտեսական և էկոլոգիական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ քանակի, ռեժիմի և որակի ջրային ռեսուրսների մատչելիության ապահովումն է: Սահմանում է ջրային ռեսուրսների կայուն կառավարման, օգտագործման և պահպանության գերակայությունները, ջրային ռեսուրսի հաշվառումը և գնահատումը, առաջարկի և պահանջարկի ձևավորումը, ջրավազանային կառավարման հետ կապված հարաբերությունները:

➤ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (1994թ. հոկտեմբերի 11, ՀՕ- 121, վերջին փոփոխությունը՝ 2022թ.):

Կառավարության որոշումներ

➤ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-Ն և «ՀՀ բույսերի



Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, անորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

➤ «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

➤ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 29.01.2010թ.-ի N 71-ն որոշում:

➤ ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 29.01.2010թ.-ի N 72-ն որոշում:

➤ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» 2007թ. մարտի 15-ի N385-Ն որոշումը ներառում է Գեղարքունիքի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

➤ «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-Ն ՀՀ կառավարության որոշումը սահմանում է ՀՀ բնության հուշարձանների ցանկը՝ համաձայն որոշման հավելվածի:

➤ «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014թ. N1059-Ա որոշումը հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի, Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014- 2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:

➤ «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 27.05.2015 նիստի N23 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

➤ ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ հաստատված ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ:

➤ ՀՀ կառավարության 2008թ.դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշում «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ



ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ:

➤ ՀՀ կառավարության 2002թ.թիվ 57 որոշում ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՂՈՍԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ, ԿԵՆՍԱԾԻՆ ՏԱՐՐԵՐԻ, ԾԱՆՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

➤ «Սևան» ազգային պարկի կանոնադրություն», ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N927-Ն որոշում:

➤ «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N205-Ն որոշում:

➤ Մայիսի 2004 թվականի N 766-Ն «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 1908.0 ՄԵՏՐ ԲԱՑԱՐՁԱԿ ՆԻՇԻՑ ՑԱԾՐ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 927-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

➤ Շրջակա միջավայրի նախարարի 2020թ. սեպտեմբերի 9-ի «Ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջները սահմանելու մասին» N 335-Ն հրաման:

➤ ՀՀ կառավարության 2008թ. 2011թ. սեպտեմբերի 8-ի դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշում «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ:

➤ «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1622-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 286-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:

➤ ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

➤ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՋՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ԴՈՒՐՍ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ»: ՀՀ կառավարության 23 Մարտի 2006, 397 – Ն որոշում:

3.1 Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման



հիմքը

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացի վերաբերյալ Հայաստանում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ-ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014թ-ին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները: Համաձայն սույն Օրենքի նախատեսվող գործունեությունը ենթակա է բնապահպանական փորձաքննության:

Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային նապահպանական կոնվենցիաներին

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ՝ առաջինը ստորագրելով Ռամսարի կոնվենցիան 1993 թ.-ին՝ խոնավ տարածքների պահպանության մասին: Այս ծրագրի համար առանձնահատուկ կարևորություն ունի այն փաստը, որ ՀՀ-ն փոխարինել է նախկին ԽՍՀՄ սահմանումներով մշակված բույսերի և կենդանիների Կարմիր գրքերը՝ ԲՊՄՄ չափորոշիչներին համապատասխան: Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը հիմնված է ԲՊՄՄ Կարմիր գրքերի վրա: Աղյուսակ 1-ում թվարկվում են համաշխարհային և տարածաշրջանային նշանակության բնապահպանական և մշակութային միջազգային այն կոնվենցիաներն ու համաձայնագրերը, որոնք ստորագրվել և/կամ վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Աղյուսակ 1: Միջազգային բազմակողմանի բնապահպանական համաձայնագրեր, որոնք ստորագրվել և վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրով թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1993	1993	Որպես իրավահաջորդ անդամա կցվել է ՀՀ ԱԳՆ պահանջո	

	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
				վ, 1993 թ.	
2	Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992)	1993	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ
3	Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն (Կարթեգենյա, 2000)	2004	2000	2004	
4	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Լյու Յոքո, 1992)	1994	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ
5	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)	2005	1997	2002	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ
6	Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (ժնև, 1979)	1997	1979	1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ
7	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանյան համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո, 1991թ.)	1997	1991	1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ
	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)	2011	2003	2010	
8	ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Շելսֆիլդ, 1992թ.)	1997	1992	1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ
	Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին արձանագրություն (Կիև, 2003)		2003		
9	Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994)	1997	1994	1997	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ
10	Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանման մասին կոնվենցիա (Բազել, 1989)	1999	1989	1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ
11	Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985)	1999	1989	1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ
	Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987)	1999	1987	1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ
12	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին	2001	1998	2001	



	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
	հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս 1998թ.)				
3	Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին կոնվենցիա (Ռոտերդամ, 1998)	2003	1998	2003	
4	ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրաահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Հելսինկի, 1992թ.)	1997	1992	1996	
	Ջրի և առողջության մասին արձանագրություն (Լոնդոն, 1999)				Վավերացման գործընթացում է
5	Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001)	2004	2001	2003	
6	Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումն արգելելու մասին կոնվենցիա (Ժնև, 1976)	2002	1976	2001	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2002 թ
7	Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենսիա, 2000)	2004	2000	2004	
8	Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972)	1993	1972	1993	Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.
9	Էներգետիկ կանոնադրության պայմանագիր (Լիսաբոն, 1994 թ.)		1994		
	Էներգախնայողության և հարակից բնապահպանական ասպեկտների վերաբերյալ Էներգիայի կանոնադրության արձանագրություն (Լիսաբոն, 1994)		1994		
20	Բեռնի կոնվենցիա- Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոխորհրդի կոնվենցիա (Բեռն, 1979)	2008	1979	2008	

Վարչական (կազմակերպական) շրջանակը



Այս բաժնում ներկայացված են նախագծի իրականացման մեջ ներառված հիմնական մասնակիցները և ամփոփվում է դրանց դերը եւ պարտականությունները, առաջնահերթ, բայց ոչ բացառապես բնապահպանական տեսանկյունից:

Իրականացնող գործակալություն (ԻԳ)

Ներկայացվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում՝ «Դ ՎԵՆՉՈՒԻՐՍ» ՓԲ ընկերությունը

Մասնավորապես ՇՄԱԳ շրջանակներում, ԻԳ-ն պատասխանատու է լինելու ամբողջ նախագծի իրականացման մոնիթորինգի համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

➤ Հետևել, որ բնապահպանական կառավարման պլանի բոլոր պահանջները՝ (ներառյալ բնական միջավայրի պահպանության պլանավորումը և մեղմացնող միջոցառումները), կապված նախագծի իրականացման հետ, պատշաճորեն ներառվեն ծրագրի փաստաթղթերի մեջ:

➤ Հետևել, որ բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և/կամ համաձայնությունները, որոնք պահանջվում են համապատասխան կառավարական մարմինների կողմից, նախքան նախագծի շրջանակներում որևէ շինարարական աշխատանքների մեկնարկը:

➤ Համոզվել, որ Ծրագիրը իրականացնողները (կապալառուներ) լիարժեք կերպով պատկերացնում են իրենց պարտականությունները՝ շրջակա միջավայրի պահպանության խնդիրների մեղմացման հարցում՝ կապված ԲԿՊ իրականացման ընթացքում աշխատակազմի հավաքագրման և վերապատրաստման հետ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմանում իրականացնում է շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

ՇՄՆ իրականացնում է գործառույթներ մի քանի առանձնացված ստորաբաժանումների միջոցով.

✓ Նախատեսվող գործունեության բնապահպանական փորձաքննության ընթացակարգը իրականացվում է “Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն” ՊՈԱԿ կողմից:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և



իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը, էներգետիկայի եւ բնական պաշարների կառավարման բնագավառում:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով.

- Օգտակար հանածոների պաշարների գործակալություն,
- Ընդերքի տրամադրման գործակալություն,
- Էներգետիկայի պետական տեսչություն, որը տրամադրում է եզրակացություն կայանի գործարկման համար,
- Ընդերքի պետական տեսչություն,
- Ջրային տնտեսության պետական կոմիտե:

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ստեղծվել է համաձայն «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության հիման վրա: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, ինչպես նաև կիրառում է պատասխանատվության միջոցներ շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և ընդերքօգտագործման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀԾԿՀ)

Արևային կայանի շինարարության և շահագործման պայմանները սահմանվում են Էներգիայի արտադրության լիցենզիայով: Ըստ ՀՀ օրենսդրության ՀԾԿՀ էներգիա արտադրող կազմակերպությանը տրամադրում է Էներգիայի արտադրության լիցենզիա համաձայն ՀԾԿՀ 1.11.2013 թ. N374 որոշման:

Առողջապահության նախարարություն

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում է իրականացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Նախարարության կազմում գործում են.

Աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանումները.

- Բժշկական օգնության քաղաքականության վարչություն,
- Մոր և մանկան առողջության պահպանման վարչություն,
- Դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչություն,
- Հանրային առողջության բաժին,



- և այլն:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ


Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Սևանա լճի ափամերձ գոտում, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում, Ճամբարակ խոշորացված համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական սահմանում: Տարածքի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40°27'54.89"C, 45°17'57.24"B:

Նշված տարածքի հեռավորությունը ամենամոտ բնակավայրերից կազմում է՝

- Շողակաթ (Շորժա) բնակավայր – մոտ 4.5կմ,
- Արտանիշ բնակավայր – մոտ 6կմ:

Պատկեր 1: Նախատեսվող գործունեության տարածքի իրադրության սխեման






Տարածքին ամենամոտ Շողակաթ բնակավայրը (մոտ 4.5կմ) գտնվում է Սևանա լճի արևելյան կենտրոնական հատվածում: Բնակավայրը գտնվում է Ճամբարակ քաղաքից 10-12 կմ հեռավորության վրա, Սևանա լճի հյուսիս-արևելյան և հարավային մասերում պատված է ապառաժներով: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1932 մետր բարձրության վրա: Ներկայացվող ցանկապատի հեռավորությունը ափից կկազմի մոտ 10-12մ:

Նախատեսվող գործունեության տարածքի կոորդինատները WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով ներկայացված են ստորև.

Պատկեր 2: Գործունեության տարածքի կոորդինատները



4.1 «Սևան» ազգային պարկի ավիամերձ հատվածի ռելիեֆը

«Սևան» ազգային պարկի Արտանիշ թերակղզու արևմտյան հատվածների ավիամերձ հատվածի ռելիեֆը (լճի ափից մինչև 1916 մետրը) ալիքավոր է և հարթ: Ափերը հիմնականում մեղմաթեք են, տեղ-տեղ զառիթափ՝ 3-8 մետր բարձրությամբ: Պարկի Սևանա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի Գիհի-կաղնուտային ռելիկտային հատվածը, ինչպես նաև Սևան և Արտանիշ թերակղզիները ունեն բլրապատ, ժայռոտ և կտրտված ռելիեֆ: Արտանիշ թերակղզու կենտրոնական և արևելյան մասը, 1915-2460.8 մետր բարձրությունների միջև, պատված են լեռնազանգվածով (բացառությամբ նրա արևմտյան մասի, որը հարթ է): Առավելագույն բարձրությունը Աղաթափա գագաթն է՝ 2460.8 մետր բարձրությամբ, որը գտնվում է թերակղզու կենտրոնական մասում: Արտանիշի թերակղզու կենտրոնական մասից լեռնաբազուկները ձգվում են ճառագայթաձև: Այստեղ մշտական հոսող գետեր չկան՝ միայն ժամանակավոր հոսող փոքրիկ գետակներ են: «Սևան» ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիկտային հատվածը հիմնականում



ընկած է 1950-ից 2500 մետր բարձրությունների միջև: Ռելիեֆն իրենից ներկայացնում է ուժեղ կտրտված լեռնային լանդշաֆտ, թեք ժայռոտ լանջերով, տարբեր խորության և լայնության ձորերով ու ձորակներով: Խոր ձորերով հոսում են մշտական գետերը՝ Դարանակ, Փամբակ, Շամպիր, Ծափաթաղ և Ջիլ:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ հաստատված «ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ» նախատեսվող գործունեության տարածքը տեղակայված է «Շողակաթ» տարածքային հատվածում «հյուրանոցային, մոթելային, քեմփինգային, քոթեջային գոտում» /ՀԿԳ-2/, որն ունի հարթ, այլքավոր ռելիեֆ: Պարկի ռեկրեացիոն գոտու տարածքներում թույլատրվում են զբոսաշրջիկների և այցելուների սպասարկման ծառայությունների կազմակերպումը, ինչպես նաև 1905 նիշից բարձր տարածքներում կապիտալ և ոչ հիմնական կառուցապատումը՝ քաղաքաշինական նորմերի և սահմանափակումներին համապատասխան: Այն գոտևորվել է 2 հարկանի՝ 6 մ թույլատրելի բարձրությամբ կառուցապատման հատվածների (հյուրանոցային ժամանցային օբյեկտներով կառուցապատման հատվածների, հասարակական սպասարկման և սննդի, ինչպես նաև սպորտի օբյեկտներով կառուցապատման հատվածների համար:

Ներկայացված տարածքը հիմնականում ամայի է, որտեղ բուսականությունը հանդիպում է միայն ավիամերձ հատվածում (հիմնականում՝ եղևնիներ, չիչխանի թփեր): Հողաբուսաշերտը բացակայում է: Ազդեցության ենթակա տարածքներում ծառահատման, ծառերի տեղափոխման, մաքրման աշխատանքեր չեն նախատեսվում: Ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքները կլինեն համահունչ և ներդաշնակ գոյություն ունեցող լանդշաֆտին և բնությանը, չխաթարելով տարածքի էկոհամակարգը և հարակից շրջակա միջավայրը:

4.2 Սևանա լիճ և «Սևան» ԱՊ

Սևանա լիճը Հայաստանի Հանրապետության համար ունի գեոքաղաքական մեծ նշանակություն, որպես տարածաշրջանային քաղցրահամ ջրի միակ հսկայական աղբյուր: Այն մի բնատարածքային համալիր է, որն իրենից ներկայացնում է բնության տարբեր տարրերի սերտ փոխկապակցվածություն, ինչպես նաև ունի կլիմայագոյացնող կարևոր նշանակություն ինչպես հանրապետության, այնպես էլ տարածաշրջանային և գլոբալ առումով: Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա:

«Սևան ազգային պարկ»-ը ստեղծվել է ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1978 թվականի մարտի 14-ի ««Սևան ազգային պարկ» ստեղծելու մասին» N 125 որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N927-Ն որոշմամբ «Սևան ազգային պարկ» պետական հիմնարկը



վերակազմակերպվել է համանուն պետական ոչ առևտրային կազմակերպության, հաստատվել են պարկի և կազմակերպության կանոնադրությունները, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1185-Ն որոշմամբ ստեղծվել է՝ «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը, ամրագրվել վերջինիս գործառույթների շրջանակը, կազմն ու գործունեության կարգը:

«Սևան» ազգային պարկի» (այսուհետև՝ պարկ) գործունեության նպատակը՝ պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է:

Պարկը հանրապետական նշանակության՝ բնության հատուկ պահպանվող տարածք է: Պարկի հողերը հատուկ պահպանվող տարածքների հողեր են, որոնք ներառում են բնապահպանական, պատմական ու մշակութային և այլ նշանակության հողեր, որոնց վրա օրենքով սահմանված կարգով արգելվում է պարկի նպատակների հակասող գործունեություն: Պարկի սահմաններում վարձակալության կամ կառուցապատման իրավունք ունեցող հողօգտագործողները, հողամասերի վրա կառուցված շենքերն ու կառույցները պետք է օգտագործվեն իրենց նշանակությանը համապատասխան՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Համաձայն կառավարման պլանի՝ «Սևան» ազգային պարկի տարածքը Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147 456 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22 697 հա:

2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Սևան» ԱՊ-ի տարածքը կազմում է 22584.25 հա: Ռեկրեացիոն գոտու ընդհանուր մակերեսը 4753 հա է, որն ընդգրկում է միայն ցամաքային տարածք: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի «Սևան» ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան ազգային պարկ»-ի և ««Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին» N927-Ն որոշման՝ զբոսաշրջիկների և այցելուների սպասարկման ծառայությունների կազմակերպումը, ինչպես նաև 1905 նիշից բարձր տարածքներում կապիտալ և ոչ հիմնական կառուցապատումը՝ քաղաքաշինական նորմերի և սահմանափակումներին համապատասխան, պարկի ռեկրեացիոն գոտու տարածքներում թույլատրվում են: Ռեկրեացիոն գոտու վարձակալված տարածքներում քաղաքաշինական գործունեությունը թույլատրվում է իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բնապահպանական և քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացության դեպքում:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ



հաստատված «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ» (այսուհետ որոշում) տարածքը տեղակայված է «Շողակաթ» տարածքային հատվածում՝ «Սևան» ԱՊ-ի ռեկրացիոն գոտում: Շողակաթ բնակավայրի տարածքը, համաձայն որոշման, բաժանված է ռեկրացիոն, տնտեսական և արգելոցային գոտիների: Ազգային պարկի ռեկրացիոն գոտում սահմանվել են մեկ հարկանի օգտագործման 17 հիմնական գոտիներ՝ նախատեսված հանգստի, առողջարանական, ժամանացային, հյուրանոցային, սպորտային օբյեկտների, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների, ենթակառուցվածքների և այլ գոտիներ կառուցապատման համար, ինչպես նաև բուֆերային գոտիներ:

Սույն հայտով նախատեսվում է ցանկապատի և դարպասների կառուցում, որոնք բաղկացած են լինելու մետաղական ցանցից և մետաղական խողովակներից:

Կառուցապատվող հատվածների հատակագծային լուծումները ընտրվել են բնական միջավայրին համահունչ՝ հաշվի առնելով ավի ուրվագիծը, ռելիեֆի ուղղվածությունը և առկա հատակագծային կառուցվածքը:

Նախատեսվող գործունեության համար ընտրված տարածքը կից է Սևանա լճի առափնյա այլ հանգստյան գոտու: Գործունեության ենթակա ամբողջ տարածքը գտնվում է «Սևան ազգային պարկ»-ի ռեկրեացիոն գոտում: Ցանկապատի հեռավորությունը ավից կազմելու է մոտ 10-12մ:

Չնայած քամիների հյուսիս-արևելյան ուղղվածությանը, դրանց ազդեցությունը շատ չէ, քանի որ անցնելով Գեղամա լեռնաշղթայով, քամու ուժգնությունը կտրվում է: Լանջերի թեքությունները և ուղղվածությունը բարենպաստ են կառուցապատման համար: Գրունտների արագացումը 0.5-0.6 ց է:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5.1. Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը

Ներկայացված գործունեությունը նախատեսվում է իրականացնել Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի լճափային հատվածում: Շողակաթ գյուղը գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևելյան ավիին, Արտանիշի թերակղզու արևմտյան ծայրին, ձգվում է մինչև Արտանիշ լեռան ստորոտ: Ռելիեֆը անհարթ բլրային է, խորը ձորակներով: Սևանա լճի կենտրոնական գոտու ավազանը ունի ոչ միայն բարդ գեոմորֆոլոգիական կառուցվածք, այլ նաև բարդ հետերոգեն տեկտոնական կառուցվածք: Սևանի ավազանի ամենահին առաջացումներն են համարվում բյուրեղային թերթաքարերը, որոնք երկրի մակերևույթին մերկանում են Սևանի ավազանից դուրս: Ջրի հատակից դուրս եկած առափնյա շերտը կազմված է ավազա-կավային և գելենչիկային նստվածքներից: Ռելիեֆը անհարթ բլրային է՝ ավսեաձև իջվածքներով է, թույլ բլրակային, աննշան կոնաձև իջվածքներով:




Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ռելիեֆի ստրուկտուրային դենուդացիոն և էոզոլոն դենուդացիոն տիպերը, միջին էոցենի 17 հասակի ապարները՝ անդեզիտա-բազալտները՝ ծածկված չորրորդական հասակի փուխր բեկորային ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքներով:

5.2. Սեյսմիկա և երկրաբանություն

Համաձայն 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերում» ներառված և ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզի՝ տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ:

Պատկեր 3: Սեյսմիկ գոտիների քարտեզ



Դեպի Սևանա լիճ կուտակված առաջացումները ներկայացված են՝ ավազաքարերով, կավերով, տուֆոավազաքարերով, գլաքարա-կոնգլոմերատային, լճային գոյացումներով՝ ճալաքարերի ջրատար շերտերով: Ճալաքարային շերտերի հետ են կապված Սևանի ավազանի արտեզիան և ճնշունային ջրերը:

Մեծ տարածում ունեն տուֆոկոնգլոմերատները, տուֆոբրեկչիաները, պորֆիրիտները և դրանք հատող ինտրուզիաները: Բարձրադիր լանջերը և ջրբաժանները ներկայացված են մերգելներով և կրաքարերով, որոնք աններդաշնակ կերպով տարածված են հրաբխա-նստվածքային կոմպլեքսի վրա:

Տարածաշրջանը բնութագրվում է կտրուկ կտրտված բլրային ռելեֆով, խորը ձորակներով: Ստորգետնյա ջրերը հիմնականում կապված են վերին կավճի հասակի կրաքարերի և ուլտրահիմքային ու հիմքային ապարների կոնտակտի հետ, որոնք բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս երկրի մակերես: Ջրամերժ շերտերը



հանդիսանում են ուլտրահիմքային ապարների կոտրատված մասսան (մագնետիզացված և սերպենտինիտիզացված դունիտները ու սերպենտինիտները), որոնք վերածվել են կավանման առաջացումների: Ապարները պրոյուվիալ, դեյուվիալ առաջացումներ են: Այուվիալ-դեյուվիալ առաջացումների հետ կապված՝ գրունտային ջրեր, որոնք փոքր բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս Դրախտիկ գետի միջին և վերին հոսանքներում, ունեն սեզոնային բնույթ: Շրջանում մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 600մմ, որոնց մի մասը ներծծվելով ապարների շեղքերով ու ծակոտիկներով, բեռնաթափում են սեզոնային բնույթի աղբյուրների տեսքով, իսկ մյուսը՝ ժամանակավոր հոսքերի տեսքով հոսում են դեպի Սևանա լիճ:

5.3 Հիդրոերկրաբանություն

Տարածաշրջանի ստորգետնյա ջրերը հիմնականում կապված են վերին կավձի հասակի կրաքարերի և ուլտրահիմքային ու հիմքային ապարների կոնտակտի հետ, որոնք բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս երկրի մակերես: Ջրամերժ շերտերը հանդիսանում են ուլտրահիմքային ապարների կոտրատված մասսան (մագնետիզացված և սերպենտինիտիզացված դունիտները ու սերպենտինիտները), որոնք վերածվել են կավանման առաջացումների:

Ապարները պրոյուվիալ, դեյուվիալ առաջացումներ են, որոնց հետ կապված գրունտային ջրերը սեզոնային հոսքերի տեսքով դուրս են գալիս գետերի միջին և վերին հոսանքներում: Դեպի Սևանա լիճ կուտակված առաջացումները ներկայացված են՝ ավազաքարերով, կավերով, տուֆոավազաքարերով, գլաքարա-կոնգլոմերատային, լճային գոյացումներով՝ ճալաքարերի ջրատար շերտերով: Ճալաքարային շերտերի հետ են կապված Սևանի ավազանի արտեզիան և ճնշունային ջրերը: Երկրաբանա-գեոմորֆոլոգիական տեսակետից Սևանա լճի հյուսիս-արևելյան հատվածն իրենից ներկայացնում է փոքր խորդուբորդություններով պլատո, լցված լավաների բեկորներով և քարակտորներով (չինգիլներով), տեղ-տեղ ծածկված էյուվիալ-դեյուվիալ և այուվիալ առաջացումների ծածկոցով: Հիդրոերկրաբանական տեսակետից վերը նշված նստվածքները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ իրենց մեջ պարունակում են ճալաքարերի ջրատար շերտեր: Այս ճալաքարային շերտերի հետ են կապված Սևանի ավազանի արտեզիան և ճնշունային ջրերը:

5.4. Կլիմա և օդային ավազան

Սևանա լճի կենտրոնական գոտու տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Տարածաշրջանի կլիման չորային է: Ձմռանը գերիշխում է պարզ արևոտ թույլ սառնամանիքներով եղանակը (15-17 օր ամսվա ընթացքում), ձմռանը չափավոր ցուրտ է: Ամառը տաք է, չոր և անհողմ: Գարնանից



ամառ անցումը տեղի է ունենում աստիճանաբար՝ շնորհիվ լճի ջրային ավազանի ազդեցության: Ամենաանպաստավոր կլիմայական պայմանները դիտվում են լճի արևելյան ափին:

Սևանա լճի ջրհավաք ավազանում կլիմայի ձևավորման հիմնական գործոններն են արևի ճառագայթումը և մթնոլորտային շրջապտույտը: Արևային ժամերի քանակը տարեկան տատանվում է 2600-2800-ի միջև: Սևանա լճի կենտրոնական գոտու տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Ամենաանպաստ կլիմայական պայմանները դիտվում են լճի արևմտյան ափին, որտեղ օդի ջերմաստիճանի կարող է իջնել մինչև -36°C :

Քամիների միջին տարեկան արագությունը տատանվում է 1.5-6.0 մ/վրկ: Ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, իսկ հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին:

Կլիմայական պայմանների մանրամասն ցուցանիշները ներկայացված են ստորև՝ աղյուսակներում: Ներկայացված Ծրագրի իրականացման ամենմոտ օդերևութաբանական ցուցանիշները վերլուծելով, կարելի է նշել, որ դիտարկվել է -32°C օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճան և 34°C բացարձակ առավելագույն ջերմաստիճան, ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը կազմել է 63% և ամենաշոգ ամսվանը՝ 49%, մթնոլորտային միջին տարեկան տեղումները կազմում են 426մմ, իսկ տարվա մեջ միջին ձնածածկ օրերի քանակը՝ 77: Առանց արևի օրերի քանակը կազմում է տարեկան 18օր (2697ժ.):

Հիմնական կլիմայական տեղեկատվությունը վերցվել է «Շորժա» օդերևութաբանական կայանի տվյալներից, իսկ դրա բացակայության դեպքում՝ «Սևան» քաղաքային կամ «Սևան» լճային կայանների տվյալներից:

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Աղյուսակ 2: Օդի ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$

Բնակավայրի անվանումը	Օդի միջին ամսական, ըստ ամիսների $^{\circ}\text{C}$												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Սևան													4,2	-33	32



1	2	3	Հյուսիս ասյին (Հս)	Հյուսիս- Արև փեյյան (ՀսԱրբ)	Արև փեյյան (Արբ)	Հարավ- Արև փեյյան (ՀվԱրբ)	Հարավ (Հվ)	Հարավ- Արև փեյյան (ՀվԱրբ)	Արև փեյյան (Արբ)	Հյուսիս- Արև փեյյան (ՀսԱրբ)	12	13	14	15	, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			4	5	6	7	8	9	10	11					20	50	100
Սևան քաղաք	805.5	Հունվար	3	2	2	2	1	7	25	25	13	4.2	3.4	47	27	31	33
			4,1	4,0	3,3	2,7	2,9	5,3	5,4	3,7							
		Ապրիլ	5	9	23	8	4	16	28	7	20	3,3					
			3,9	3,7	3,2	2,5	3,8	6,3	5,5	3,4							
		Հուլիս	18	35	31	6	3	2	3	2	17	3,1					
			4,7	4,1	3,2	2,7	2,1	2,5	3,1	2,8							
		հոկտեմբեր	7	5	7	3	4	15	45	14	33	2,7					
			4,0	3,8	2,7	2,2	2,3	5,3	4,3	2,7							

Աղյուսակ 7: Ձմռան սկիզբը, վերջը և տևողությունը

Բնակավայրի անվանումը	Սկիզբ	Վերջ	Տևողություն, օր
1	2	3	4
Սևան լճային	28 նոյեմբեր	27 մարտ	120

Աղյուսակ 8: Արևափայլի տևողություն (ժ) և առնաց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Արևափայլի տրոհությունը և առնաց արևի օրերի քանակը													Տարեկան
	Տևողությունը	ըստ ամիսների												
		I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	X I	XII	
Սևան լճային	ժ	149	154	189	197	253	305	330	316	274	217	170	143	2697
	օր	3	3	2	2	1	0.2	0.1	0.1	0.2	1	2	3	18

5.5 Մթնոլորտային օդ

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Մարզի օդային ավազանը գտնվում է բավականին բարվոք վիճակում: Տարածաշրջանում մթնոլորտային օդը աղտոտող արտադրական ձեռնարկություններ չկան, հիմնականում ավտոտրանսպորտի արտանետումներն են և ըստ բնակչության հաշվարկների օդի աղտոտվածությունը շատ ցածր է սահմանային թույլատրելի նորմաներից: Տարածքի հաշվարկով այս օդային ավազան արտանետումների մակարդակը քիչ է հանրապետության միջինից շուրջ 6.3 անգամ: Օդային ավազանում հայտնաբերված փոշու քանակությամբ մարզը գտնվում է բարվոք վիճակում, այս ցուցանիշը միջին հանրապետական մեկ շնչի հաշվով ցուցանիշից փոքր է շուրջ 3



անգամ:

Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման: Մթնոլորտային օդի որակի ուսումնասիրությունները կատարվում է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դիտակետերի միջոցով: Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022թ. -ի 2-րդ եռամսյակի հրապարակված տեղեկագրի՝ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների, Գեղարքունիքի մարզի և Սևան, Գավառ քաղաքների օդային ավազանի որակի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: Իսկ Հայէկոմոնիտորինգ ձեռնարկ-ուղեցույցի՝ ըստ բնակչության թվաքանակի համաձայն օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները ժամկետանց են: Ուստի հայտում չի ներառվել 2022թ. -ի Գեղարքունիքի մարզի օդային ավազանի որակի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ըստ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններ փաստաթղթի («Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ, <http://meteomonitoring.am/page/1591>)՝ մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները ներկայացվում են ստորև, որոնց թվին է պատկանում նաև Շողակաթ բնակավայրը:

- Փոշի՝ 0.071 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³:

Պատկեր 4: ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Պատկեր 5: ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի արդյունքները / 2021 թվական

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի
 արդյունքները / 2021 թվական



5.6. Աղմուկ և թրթռում

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդ բերված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9: ՀՀ սահմանված աղմուկի նորմերը

Ընկալիչ	Ժամերը	Աղմուկի առավելագույն թույլատրելի մակարդակը	
		dBL _{Aeq}	dBL _{AMAX}
Բնակելի և հասարակական շենքերի մոտ	06:00-22:00	55	70
	22:00-06:00	45	60

Աղյուսակ 10: Լարվածության եվ ծանրության տարբեր կատեգորիաների աշխատանքային գործունեության աշխատատեղերում ձայնի սահմանային թույլատրելի մակարդակները եվ ձայնի



սահմանային մակարդակները դժբառով

Աշխատանքային և գործընթացի լարվածության կարգ	Աշխատանքային գործընթացի ծանրության կարգ				
	Թեթև ֆիզիկական ծանրաբեռն վածություն	միջին ֆիզիկական ծանրաբեռն վածություն	1 աստիճանի ծանր աշխատանք ի	2 աստիճանի ծանր աշխատանք ի	3 աստիճանի ծանր աշխատանք ի
Թեթև աստիճանի լարվածություն	80	80	75	75	75
Միջին աստիճանի լարվածություն	70	70	65	65	65
Աշխատանքի 1 աստիճանի լարվածություն	60	60			
Աշխատանքի 2 աստիճանի լարվածություն	50	50			

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները: Ելակետային իրավիճակում հայցվող տարածքում աղմուկի մակարդակը ցածր է, գործնականում աղմուկի աղբյուրները մարդածին չեն /բնական ձայներ են/:

5.7. Համայնքի սոցիալական նկարագիրը

Շողակաթ բնակավայրը գտնվում է Սևանա լճի արևելյան կենտրոնական հատվածում: Բնակավայրը գտնվում է Ճամբարակ քաղաքից 10-12 կմ հեռավորության վրա, Սևանա լճի հյուսիս-արևելյան և հարավային մասով պատված է ապառաժներով: Գեղարքունիքի մարզում հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է 95 կիլոմետր, իսկ Երևան քաղաքից՝ 110 կիլոմետր: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1932 մետր բարձրության վրա: Բարձրադիրության և լեռնային գոտի լինելու հետևանքով կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը՝ չորային: Մակերեսը՝ 39,2 քառակուսի կմ է: Տարածքում առկա են քրոմիտի զգալի պաշարներ: Վերջինս հայտնաբերվել է 1889 թվականին 1,5 կմ Շողակաթից դեպի արևելք ընթեցած հատվածում:

Պատկեր 6: Գեղարքունիքի մարզի քարտեզ



Շողակաթում պահպանվել են 17-րդ դար թվագրվող հայկական եկեղեցու, 16-րդ դարի կառույց հանդիսացող հայկական մատուռների կիսաքանդ ավերակներ և այլ հնություններ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են Ք.ա. 1-ին հազարամյակում բերդի ավերակներ, դամբարաններ՝ Ք.ա. 2-րդ- 1-ին հազարամյակի թվագրությամբ: Գյուղում գործում է նաև 16-րդ դարում կառուցված և 2009 թվականին վերականգնված եկեղեցի: Հայտնաբերվել են նաև բազմաթիվ գտածոներ:

Որպես բնակավայր Շորժան գոյություն ունի դեռևս Ք.ա. 1-ին հազարամյակում: Դեռևս ուրարտական շրջանում Վեդուրի-Էթիունի (Ջրային Էթիունի) պատկանող այս տարածքում և հարակից վայրերում եղել են պետական- ցեղային կազմավորումներ որոնց մասին մեզ է վկայում Սևանա լճի ափին փորագրված արձանագրությունը, որը կախված է եղել ուղիղ լճի ափքների վրա: Արձանագրության հեղինակն է հանդիսանում Ուրարտուի անողոր թագավոր Ռուսա Առաջինը (Ք.ա 735-714 թթ), որը խոսում է ներկայիս Շորժայի և հարակից թագավորությունների ու ցեղապետությունների նվաճումների մասին:

Բնակչությունը նախկինում եղել է միատար, բնակվել են միայն մուլրովացիներ: 20-րդ դարի սկզբից գյուղում բնակություն են հաստատել նաև թրքախոս աղկոյանլու և



կարակոյանլու ցեղի ներկայացուցիչներ: 1989-1992 թթ. գյուղը վերաբնակեցվել:
 Ներկայումս բնակչության թիվը կազմում է 565 մարդ
 (<https://www.armstat.am/am/?nid=111>):

Զբաղվածության հիմնական ուղղություններն են՝ հողագործություն, անասնապահություն, պտղաբուծություն, սպասարկման ոլորտ: Գյուղի միջով է անցնում Երևան-Զոդ ավտոճանապարհը և Երևան-Զոդ երկաթուղին: Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, նախակրթարան, բուժկետ, երկաթուղային կայարան, օդերևութաբանական կայան, մի քանի հանգստյան տներ:

5.8 Հողային ռեսուրսներ

Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում կան զգալի հարթ տարածություններ, առկա են շատ որակյալ հողեր և նպատակահարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է՝ շուրջ 10000 հեկտար: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200մ բարձրություն:

Տարածաշրջանում՝ «Սևան» ազգային պարկի տարածքի մեծ մասը կազմում են Սևանա լճից ազատված հողագրունտները՝ ավազային, հումուսի աննշան պարունակությամբ: Հիմնականում ձևավորվել են 22 հողագրունտի 3 խմբեր՝ հողագոյացման խոնավ մարգագետնային, ավազային, սապրոպելիտային տափաստանացված, ինչպես նաև զգալի տարածքներ զբաղեցնող թերի զարգացած ավազակոպճային հողագրունտները:

Գորշունեության տարածքում գերիշխում են տափաստանային և կարբոնացված անտառային դարչնագույն հողերը, որոնք ձևավորվել են կարբոնատային, խճաքարային բերվածքների վրա:

Սևանա լճի հարավային և արևմտյան առափնյա հարթ տարածությունները բնութագրվում են լեռնատափաստանային բերրի սևահողերով, իսկ համեմատաբար բարձրադիր մասերը՝ լեռնամարգագետնային հողերով: Իսկ գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը:

«Սևան»ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիկտային, Սևանա թերակղզու արևելյան և Արտանիշ թերակղզու կենտրոնական ու արևելյան բլրապատ և լեռնոտ հատվածներում առկա են լեռնատափաստանային չոր, իսկ 2400մ և ավելի բարձրություններում՝ լեռնամարգագետնային հողերի տիպերը:

Նախատեսվող գործունեությունը տեղակայված է Սևանի ավիամերձ տարածքում, որտեղ չկան հողային ռեսուրսները աղտոտող օբյեկտներ, և հողային ռեսուրսների աղտոտվածությունը գտնվում է նորմայի սահմաններում:

5.9 Զրային ռեսուրսներ



Սևանի ավազանի հիդրոերկրաբանական պայմանները բնորոշվում են երկրաբանա-կառուցվածքային, գեոմորֆոլոգիական և ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով: Այս առանձնահատկություններով է պայմանավորված որոշ տեղամասերում միայն գրունտային ջրերի տարածվածությունը, իսկ այլ տեղամասերում՝ բացի գրունտային ջրերից, տարածված են նաև ացիսաթթու գազով հարուստ ճնշումային և հանքային ջրեր: Սևանի ջրավազանային տարածքը ներառում է Ձկնագետ, Մասրիկ, Սոթք գետերի գետավազանները, Վարդենիսի ու Գեղամա լեռներից սկսվող գետերը:

Ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-ենցաղային և արտադրական կեղտաջրերը: Մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չեն մաքրվում: Սևանի ջրավազանային տարածքում ստորերկրյա ջրերի քանակի և որակի նշանակալի փոփոխություններն աննշան են, պայմանավորված բնական պայմաններով՝ ամռան ամիսներին ռոռզման նպատակով հորերի ջրածախսի ավելացմամբ:

Հիդրոերկրաբանական տեսակետից վերը նշված նստվածքները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ իրենց մեջ պարունակում են ճալաքարերի ջրատար շերտեր: Այս ճալաքարային շերտերի հետ են կապված Սևանի ավազանի արտեզիան և ճնշումային ջրերը:

Սևանա լճում կուտակված առաջացումները ներկայացված են ավազաքարերով, կավերով, տուֆոավազաքարերով, գլաքարա-կոնգլոմերատային, լճային գոյացումներով:

Տարածաշրջանի ամենամեծ ջրային ռեսուրսը Սևանա լիճն է:

Սևանա լիճ. նախատեսվող գործունեությունը տեղակայված է Սևանա լճի ավիամերձ տարածքում: Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով: Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Սևանը Հարավային Կովկասի խոշորագույն, բարձրադիր քաղցրահամ լիճն է, որի ծավալը 33.2 կմ³ է, մակերեսը՝ 1238 կմ²: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շողակաթի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան (20.4 կմ³), հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան (12.8 կմ³): Լճի առավելագույն խորությունը 79.4 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.2 մ, ավի շրջագիծը մոտ 230 կմ:



Սևանա լիճ են թափվում 28 գետեր և գետակներ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Գետերի ավազանների մակերեսների գումարը կազմում է 2780 կմ², իսկ միջավազանային տարածությունը՝ 696.0 կմ²:

Գետերի մեծ մասի առավելագույն ելքերը, սովորաբար, դիտվում են գարնանային վարարումների ժամանակ: Սակայն կարող են դիտվել նաև ամառ-աշնանային սակավաջուր փուլի ընթացքում, որի պատճառը այս սեզոնում հաճախակի տեղացող տեղատարափ անձրևներն են: Գետերի մեծ մասն ունի լավ արտահայտված սակավաջրության երկու փուլ՝ ամառ-աշնանային և ձմեռային:

Լճից դուրս է գալիս մեկ գետ՝ Հրազդանը, որի բնական հոսքը մինչև լճի մակարդակի իջեցումը եղել է 110 մլն.մ³ տարեկան: Ներկայումս այս գետը վերածվել է ջրանցքների և ջրատարների մի համակարգի, որով հոսում է Սևանա լճից ոռոգման նպատակներով վերցվող ջուրը: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շողակաթի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավարևելյան կամ Մեծ Սևան, հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան: Լճի երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Սևանա լիճը Շողակաթի ստորջրյա թմբով բաժանվում է 2 մասի՝ Մեծ Սևանի (37.7 մ միջին խորություն) և Փոքր Սևանի (50.9մ): Ըստ 2021թ.-ի տեղեկագրի՝ 2021թ.-ի հունվարի 1-ի դրությամբ Սևանա լճի մակերեսը կազմել է 1278.701կմ², իսկ լճի ծավալը կազմել է՝ 38.2022կմ³, դեկտեմբերի 31-ի դրությամբ լճի մակերեսը կազմել է 1277.845 կմ², իսկ ծավալը՝ 38.0875կմ³:

Պատկեր 7: Սևանի ջրավազանային կառավարման տարածք



Լիճը գտնվում է Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա: Լճի պահպանական գոտու տարածքը կազմում է 342,920 հա: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.7կմ³: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում:

Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Սևանա լճի ավազանում ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, իսկ նրա հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին: Օդի հարաբերական խոնավությունը ենթակա է օրական և սեզոնային տատանումների: Ձմռանը միջին հարաբերական խոնավությունը Փոքր Սևանում կազմում է 70-75%, Մեծ Սևանում՝ 80-85%, ամռանը՝ համապատասխանաբար Փոքր Սևանում՝ 65%, Մեծ Սևանում՝ 75%: Սևանա լճի ջրահավաք ավազանում տարեկան գումարային տեղումների բաշխումը ընդհանուր առմամբ համապատասխանում է նրա լեռնագրությանը:

Լճի ջրահավաք ավազանում մթնոլորտային տեղումները, կախված են տեղանքի բարձրությունից՝ տարեկան 400մմ-ից (լճի առափնյա շրջանում) մինչև 900

մմ-ի (շրջապատի լեռների մերձագագաթային շրջանում), միջինը՝ 500-600 մմ: Տարվա ընթացքում լճի հայելու վրա տեղումների միջին քանակը կազմում է 390 մմ: Խորհրդային կառավարման տարիներին լճի մակարդակը զգալիորեն իջել է (18 մ), ինչի հետևանքով տարածաշրջանում առաջացել է էկոլոգիական խնդիր: Ջրի մակարդակի բարձրությունը վերականգնելու համար կառուցվել է Արփա– Սևան (48.3 կմ, 1963-81 թվականներ), ապա՝ Որոտան–Արփա դերիվատացիոն ջրատարները (21.6 կմ, 2004թ.-ին):

Համաձայն 2014թ.-ի «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվել և իրականացվում են Սևանա լճի և ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանության, էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և կենսաբազմազանության բնականոն զարգացման ու բնական պաշարների կայուն օգտագործման միջոցառումներ:

Սևանա լճի ավազանի համայնքների զգալի մասում ռոռզման նպատակով հիմնականում օգագործվում են Սևանա լիճ թափվող գետերի ջրերը, որոնց մեծ մասը անկանոն և չվերահսկվող ռոռզման հետևանքով ամառային ամիսներին ցամաքում են՝ զգալի վնաս հասցնելով գետերում ձվադրող ձկնատեսակներին՝ Սևանի կողակին, Ամառային իշխանին, Գեղարքունիքին և Սևանի բեղլուին, որոնք կորցնում են բազմացման համար անհրաժեշտ միջավայրը և պայմանները: Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ափամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մնում անտառածածկ հատվածներ՝ հսկայական ծառեր, թփեր, ծառերի արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ: Պետբյուջեի միջոցներով ջրածածկ անտառաթփային տարածքները շարունակաբար մաքրվում են:

Սևանա լճի համար գերխնդիր է նաև հարակից բնակավայրերից, արտադրական օբյեկտներից և լճի շուրջը կառուցապատված հանգստյան տներից լիճ թափվող կեղտաջրերի խնդիրը: Մաքման կայանների նախատեսումը և ափամերձ ջրածածկ հատվածների մաքրումը Սևանա լճի համար խիստ անհրաժեշտություն է:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի համաձայն՝ լճի մակերևույթից և տարբեր խորություններից: Մոնիթորինգն իրականացվում է տարին 2 անգամ՝ 18 դիտակետերում՝ հիմնականում անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար:


Պատկեր 8: ՀՀ-ում ջրի որակի գնահատման մանրամասն քարտեզ



Ներկայացվում է Սևանա լճի հիդրոլոգիական ռեժիմը՝ համաձայն գլխավոր(www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի:

Պատկեր 9: Սևանա լճի հիդրոլոգիական ռեժիմը սեպտեմբերի 5-11-ը (2022թ.)

Սևանա լճի հիդրոլոգիական ռեժիմը սեպտեմբերի 5-11-ը. (2022թ.)



ՀՀ և միջազգային պահանջների համաձայն մակերևութային ջրերի որակի դասը ձևավորվում է հիմնական անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի, ծանր մետաղների, առաջնային օրգանական աղտոտիչների համալիր գնահատմամբ:

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2021թ. -ին հրապարակված տեղեկագրում ներառված Սևանա լճի մոնիթորինգի արդյունքների՝ 2021 թվականին Սևանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 17 դիտակետում, որոնցից 17.6%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 58.8%-ում՝ 3-րդ դաս, 23.5%- ում՝ 4-րդ դաս: Նախորդ



տարվա համեմատ 2021 թվականին ջրի որակի փոփոխություն է նկատվել: Համաձայն Գլխավոր (www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի՝ 2022թ օգոստոս ամսին Սևանա լճի տարբեր հատվածներում կատարված ջրի որակի մոնիթորինգի արդյունքների՝ Սևան լճի ջրի որակն ընդհանրական դասով գնահատվում է 4-5-րդ դասի՝ ըստ նիտրիտ, ամոնիում, ֆոսֆատիոնների և ԹՔՊ ցուցանիշների:

Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի համաձայն:

5.10 Բուսական և կենդանական աշխարհ

5.10.1 Բուսական աշխարհ

Սևանա լճի և տարածքի կենսաբազմազանության պահպանման նպատակով ստեղծվել է «Սևան»ԱՊ-ն:

Տարածաշրջանը տափաստանային միջին լեռնային (1400-2300ծ.մ.բ.) է, իրեն բնորոշ լեռնատափաստանային բուսականությամբ՝ հատիկաբուսականության գերակշռությամբ, բլրի արանքներում և քարակույտերի մոտ թփերի և առանձին ծառերի առկայությամբ: Տափաստանային գոտին Հայաստանի տարածքի ամենաընդարձակ գոտին է, որը սկսվում է 1500-1600 մ-ից, երկրի հյուսիսային հատվածում հասնում է մինչև 2000մ բարձրության, իսկ հարավային հատվածում՝ 2400- 2500մ՝ տափաստանային և գորշ կարբոնատային, անտառային տիպերով: Աչքի են ընկնում բուսական համակեցությունների բազմազանությամբ: Ծայրահեղ չորասեր, գուղձավոր, պնդաճիմ հացազգի խոտաբույսերի, փշաբարձիկավոր տարախոտերի առկայությունը բուսականության բնորոշ առանձնահատկություններից է: Ավելի հարավ ընկած տարածություններում տարածված են հիմնականում գիհու և կաղնու անտառները: Սևանի ավազանին բնորոշ են ցամաքային էկոհամակարգերը՝ մարգագետիններ, տափաստաններ, անտառային և նոսրանտառային, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված տարածքները: Պայմանավորված ռելիեֆային առանձնահատկություններով՝ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ:

Որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովոդ թփուտները՝ ցածրաճ գիհուտները և այլն: Տարածաշրջանի բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտա-հացազգային/*Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albovii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. Lessingiana* Trin. Et Rupr., *S. Tirsa* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., սեասկներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*/: Տափաստաններում հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքները, նաև



հրդեհները բացասաբար են ազդում բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա: Բնական բուսածածկույթին փոխարինելու են գալիս մշակաբույսերը՝ ցորեն, եգիպտացորեն, արևածաղիկ, պտղատու այգիները, իսկ ողողատներում՝ բանջարեղենի մշակությունը: Սևանի ջրհավաք ավազանի տափաստանային գոտին՝ 1906-2400մ ծովի մակերևույթից բարձր է, հիմնականում ներկայացված է չոր և տիպիկ տափաստաններին բնորոշ խոտաբույսերով՝ շյուղախոտ, փետրախոտ և այլն: Այստեղ աճում են նաև գիհու, մասրենու, արոսենու, կծուխորի, այծատերևուկի և այլ թփուտներ: Բավական շատ են գազերը, ոզնաթփերը, որոնց թվում կան մի շարք հազվագյուտ և անհետացող տեսակներ: Մարդու կողմից առավել յուրացված է հենց այս գոտին, որի զգալի մասը վերածվել է վարելահողերի, իսկ մնացածը ակտիվ օգտագործվում է որպես խոտհարքեր և արոտավայրեր:

Համաձայն ՀՀ կառավարության «Սևան» ԱՊ-ի 2007-2011թթ կառավարման պլանի՝ «Սևան ազգային պարկ»-ի և պահպանական գոտու տարածքում գրանցված են մոտ 1619 տեսակ անոթավոր բույսեր (Հայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից ավելի), 23 էնդեմիկ բուսատեսակներ, որոնցից 13-ը Սևանի ֆլորիստիկ շրջանի էնդեմիկներ: Միայն ազգային պարկի տարածքում աճում են Հայաստանի էնդեմիկ և Սևանա լճի ավազանի 5 էնդեմիկ տեսակներ: Համաձայն «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Սևանի տարածաշրջանին բնորոշ են տափաստանները, մարգագետինները, կաղնու անտառները և գիհու նոսրանտառները: Էնդեմիկ բուսատեսակների թիվը 28 է, իսկ ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների թիվը՝ 48: Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի: «Սևան ազգային պարկ»-ի և դրա պահպանական գոտու առկա է շուրջ 32 ծառատեսակ, 102 թփերի տեսակ, 1146 բազմամյա խոտաբույս և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներ: Տեղանքում աճում են հացազգիների պատկանող շատ բույսեր՝ շյուղախոտի (*Festuca* sp.), որումի (*Lolium* sp.) և դաշտավլուկների (*Poa* sp.) տարբեր տեսակներ: Սևանա լճի ավազանում բավականին տարածված են նաև բուսականության էքստրազոնալ տիպերը՝ փլուզուտային, քարացրոնային և ժայռային բուսականությունը: Դրանք առանձին հատվածներով հանդիպում են բոլոր 28 բարձունքային գոտիներում: Իսկ Սևանա լճի ջրից ազատված հողազրուստները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի, չիչխան, բարդի և այլ): Կարմիր գրքում գրանցված են տարածաշրջանին բնորոշ՝ Խոզանափուշ *Ֆյոդորովի-Cousinia fedorovii* Takht, Լրջուն Սևանի-*Isatis sevangensis* N. Busch, Թրաշուշան հայաստանյան -*Gladiolus hajastanicus* Gabrielian, Հիրիկ Նրբագեղ - *Iris elegantissima* Sosn, Վիշապագլուխ ավստրիական - *Dracocephalum austriacum* L., Գառնառվույտ հայկական - *Oxytropis armeniaca* Sosn. ex Mulk:

Տարածաշրջանում կան նաև ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված՝ վտանգված սնկատեսակներ, մասնավորապես Հելվեա սև - *Helvella atra*, Մուտինուս



շնային - *Mutinus caninus* (Huds.: Pers.) Fr., կրիտիկական վիճակում գտնվող՝
Սարկոսոմա գնդաձև - *Sarcosoma globosum* Casp., Միրիոստոմա ծակոսկեն -
Myriostoma coliforme, Ռոստոմբեկովի ճողես - *Darevskia rostombekovi* Darevsky:

Կարմիր գրքում գրանցված են տարածաշրջանին բնորոշ՝ Խոզանափուշ
Ֆյոդորովի - *Cousinia fedorovii* Takht, Լրջուն Սևանի - *Isatis sevangensis* N. Busch,
Թրաշուշան հայաստանյան - *Gladiolus hajastanicus* Gabrielian, Հիրիկ Նրբագեղ - *Iris*
elegantissima Sosn, Վիշապագլուխ ավստրիական - *Dracocephalum austriacum* L.,
Գառնաովույտ հայկական - *Oxytropis armeniaca* Sosn. ex Mulk.:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «Սևան» ԱՊ-ի տարածքի
ափամերձ հատվածում, որտեղ առկա է մարդածին ազդեցությունը, ուստի ՀՀ
Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները բացակայում են:

5.10.2 Կենդանական աշխարհ

Տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է ողնաշարավոր
կենդանիների 330 տեսակներով, այդ թվում՝ կաթնասուններ՝ 44 տեսակ (գայլ, աղվես,
նապաստակ, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսա, ոչ հաճախ նաև արջ և այլն),
թռչունների՝ 267 տեսակ, 4 տեսակ երկկենցաղներ, 16 տեսակ սողուններ և 9 տեսակ
ձուկ, այդ թվում Սևանի իշխանը, որը գրանցված է Կարմիր գրքում, Սևանի կողակը,
Սևանի բեղլուն և այլն:

Համաձայն ՀՀ կառավարության «Սևան» ԱՊ-ի 2007-2011թթ կառավարման
պլանի՝ «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում
հաշվարկվում են անողնաշարավորներ, խեցգետիններ, 43 տեսակի
փափկամարմիններ՝ խիտունջներ, լորձնամույրուսկներ, միջատներին պատկանող 639
տեսակի հողվածոտանիներ: Կապտաթիթեռը (*Maculinea nausithous* Bergs), որը
հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է բնության պահպանության
միջազգային միության Կարմիր ցանկում: Լճում հանդիպում են երկարաչանչ
խեցգետին: Ողնաշարավորներից հայտնի է Սևանի էնդեմիկ իշխանն իր 4
տարատեսակներով՝ ձմեռային բախտակ՝ (*Salmo danilewskii*), ամառային բախտակ՝
(*Salmo ischchan aestivalis*), գեղարքունի՝ (*Salmo ischchan gegarkuni*), բոջակ՝ (*Salmo*
ischchan danilewskii), որոնք 30 միլյանցից տարբերվում են ձվադրման տեղերով ու
ժամկետներով (երբեմն դրան ավելացնում են 5-րդ սեռը՝ ալաբալախ՝ գետայինը), սիգ
ձուկը, էնդեմիկ ձկներից՝ Սևանի բեղլուն և Սևանի կողակը: Պատահաբար լիճ է
ներթափանցել նաև լճածածանը: Հանդիպում են նաև 4 տեսակի երկկենցաղներ, 16
տեսակի սողուններ, օձեր, 267 տեսակի թռչուններ՝ արագիլ, ֆլամինգո, սագեր, որոր,
կտցար, աղավնազգիներ, հավազգիներ և այլն: Հանդիպում են կաթնասունների 44
տեսակ, որոնք պատկանում են հետևյալ կարգերին.

- Միջատակերներ (*Insectivora*),
- Կրծողներ (*Rodentia*),
- Նապաստակներ (*Logomorpha*),



- Չղջիկներ (Chiroptera),
- Գիշատիչներ (Carnivora),
- Սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (Artiodactyla):

Նշված տեսակներից 6-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (վայրենակերպը, ջրասամույրը, գորշ արջը, խայտակապիսը, անտառային կատուն, բեզոարյան այծը): Սողուններից հանդիպում են մի շարք մողեսներ, սպիտակավոր ժայռային մողեսը, նաիրյան ժայռային մողեսը, ռուստոմբեկովի ժայռային մողեսը, հայկական ժայռային մողեսը, վալենտինի ժայռային մողեսը, իսկ օձերից՝ սովորականը, ջրային լորտուները, պղնձօձը, լեռնատափաստանային իժը: Երկկենցաղներից առկա են կանաչ դողոշը, լճագորտը, փոքրասիական գորտը և շեկովնիկի ծառագորտը: Ջրային կամ ջրաճահճային կենդանիների համար որպես ապրելավայր ծառայում են Սևանա լճի ջրերը, ափամերձ գոտու ճահճուտներն ու լիճ թափվող գետերի գետաբերանները:

Վերջին 4 տասնամյակի ընթացքում Սևանա լճի մակարդակի 19 մ իջեցումը, ինչպես նաև ավելի քան 10 հազ. հա ճահճուտների արհեստական չորացումը, նախկին ժայռոտ ափերի վերացումը խիստ բացասաբար են անդրադարձել ավազանի կենդանական աշխարհի վրա, որը հատկապես ցայտուն կերպով արտահայտված է թռչունների մոտ: Սևանի ավազանում և դրա պահպանական գոտում հանդիպում էին 267 տեսակի թռչուններից 48-ը բնադրող էին: 160 տեսակ չվող թռչուններից մնացել է 50-ը: Էնդեմ հանդիսացող Սևանի ծովորորի համար բնական միջավայրը դարձել է էկոլոգիապես անկայուն: Այսօր դրանցից շատերը՝ մոխրագույն սագը, տուրպան, կարմրակտուց և կարմրագլուխ բադերը, սպիտակագլուխ բադը (սավկան), չեն բնադրում լճի տարածքում:

Կարմիր գրքում գրանցված են՝ կաթնասունների 6 տեսակ, (Բեզոարյան այծ *Capra aegagrus Erxleben*) և այլն), սողուններից 2 տեսակ (խայտաբղետ՝ Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ-*Eremias arguta transcaucasica Darevsky, 1953*), փոքրասիական մողեսները- *Darevskia rostombekovi Darevsky 1957*): 39 թռչնատեսակներ (Հայկական որոր-*Larus armenicus*), վարդագույն հավալուսն - *Pelecanus onocrotalus Linnaeus, 1758* և այլն), սագանմաններից՝ սպիտակագլուխ բադ կամ սավկա - *Oxyura leucocephala Scopoli, 1769*, ձկներից՝ Սևանի իշխանը իր տարատեսակներով, Սևանի բեղուն (*Barbus goetschaicus Kessler*) և Սևանի կողակը (*Varicorhinus capoeta sevangi, Filippi*) հողվածոտանիներից՝ Արիոն կապտաթիթեռ *Maculinea arion zara Jachontov*, Մթնշաղային կապտաթիթեռ- *Maculinea nausithous, 31* Անտեսված կապտաթիթեռ - *Agrodiaetus neglectus Dantchenko, 2000*, Նինայի կապտաթիթեռ - *Agrodiaetus ninae Forster, 1956*, Թուրքական կապտաթիթեռ *Agrodiaetus turcicus Koçak*, գրանցված են միջազգային միության Կարմիր գրքում: Կենդանիների Կարմիր գրքում ներառված տեսակները հիմնականում պահպանված են չխախտված բնական տարածքներում և չինգիլների մոտ: Կառավարության կողմից յուրաքանչյուր տարի հաստատվում է «Սևանա լճի



Էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների տարեկան ծրագիրը», Էլնելով «Սևանա լճի Էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպատակներից ու խնդիրներից:

5.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է հատուկ պահպանվող՝ «Սևան» ԱՊ-ի սահմաններում: «Սևան» ԱՊ-ի տարածքը բաժանվում է 4 տարածքագործառնական գոտիների՝ արգելոցներ, արգելավայրեր, ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում կան 4 արգելոցներ՝ «Նորաշենի», «Լիճք-Արգիշի», «Գիլլի» և «Արտանիշի», ընդհանուր 7464 հա մակերեսով:

«Սևան» ԱՊ-ի տարածքագործառնական գոտիներից նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտը գտնվում է «Արտանիշի» արգելոցը: «Արտանիշի» արգելոցը գտնվում է ազգային պարկի արևելյան մասում, ընդգրկում է Արտանիշ թերակղզին (բացառությամբ ձախակողմյան հատվածի՝ Շողակաթ համայնքային հողերը) և Արտանիշի լճախորշի թերակղզուն հարող մասը: Տարածքը զբաղեցնում է 3640 հա մակերես, որից 2142 հա ցամաքային տարածք, իսկ 1498 հա՝ ջրային: Սահմանի ընդհանուր երկարությունը 25.9 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 11.7 կմ երկարությամբ և 7.8 կմ լայնությամբ: Արգելոցի նպատակն է ապահովել Արտանիշ թերակղզու մինչսառցային ժամանակաշրջանի բազմազան ռելիեֆային բուսականության, գիհու նոսրանտառների և տափաստանների, ինչպես նաև որպես հազվագյուտ կենդանիների (գորշ արջ, այծյամ, վարազ, բեզուարյան այծ, ազնվացեղ եղջերու և այլն) միգրացիայի միջանցքի պահպանությունը:

«Արտանիշի» արգելոցի հարևան տարածքները նպաստավոր են զբոսաշրջության զարգացման համար:

5.12. Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 9-ի N 80-Ն որոշման՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ»-ի, ներկայացված տարածքին ամենամոտ Շողակաթ (Շորժա) և Արտանիշ բնակավայրերում կան հետևյալ պատմական, մշակութային հուշարձանները.

Աղյուսակ 11: Շողակաթ (Շորժա) գյուղի պատմամշակութային հուշարձանները

1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1.				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	16-17-	գ. մ.	S	դպրոցից 200 մ հս-ամ, ճանապարհի եզրին



			րդ դդ.		
2.		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	մթա 2-1 հզմ	հս մասում	Հ Շորժա-Աղբերք ճանապարհի 2 կողմերում, հայկական և աղբբեջանական գերեզմանոցների միջակայքի սարալանջին
3.		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	մթա 2-1 հզմ	1 կմ հվ-աե	Հ ավազահանքերի մոտ, Արտանիշ թերակղզի տանող դաշտամիջյան ճանապարհից ձախ
4.		ԵԿԵՂԵՑԻ	17- րդ դ.	աե մասում	Տ գյուղի եզրին, սարի ստորոտին
4.1.		խաչքար	10- րդ դ.		Հ ազուցված հս պատին, արտաքուստ
4.2.		խաչքար	10- 11- րդ դդ.		Հ ազուցված ամ պատին, արտաքուստ, հորիզոնական դիրքով
4.3.		խաչքար	10- 11- րդ դդ.		Հ ազուցված ամ պատին, արտաքուստ
4.4.		խաչքար	13- 14- րդ դդ.		Հ եկեղեցու ներսում, դրված գլխիվայր, արձանագիր
4.5.		գերեզմանոց	10- 17- րդ դդ.		Տ եկեղեցու շուրջը
	4.5.1	խաչքար	12- րդ դ.		Հ վերնամասը՝ չի պահպանվել
	4.5.2	խաչքար	մջնդ	գյուղի աե մասում, 17դ. եկեղեցու մոտ տարածվող գերեզմանոցում	Հ թևավոր
5.		ԽԱՉՔԱՐ	1550 թ.	գ. մ.	Հ Սերգեյ Մարգարյանի տնամերձում
6.		ՄԱՏՈՒՌ	10- 14- րդ դդ.	աե մասում	Տ գյուղի աե եզրին, եկեղեցուց 200 մ հվ-աե, բլրի գագաթին

Աղյուսակ 12: Արտանիշ գյուղի պատմամշակութային հուշարձանները

1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1.			ԱՄՐՈՑ	մթա 1 հզմ- 18-րդ դդ.	5 կմ հվ- ամ	Հ	Արտանիշ թերակղզում, բարձունքին	
	1.1.		գյուղատեղի	17-18-րդ		Տ		



			դդ.		
1.2.		գերեզմանոց	16-18-րդ դդ.	S	գյուղատեղիի հս-ամ կողմում
1.3.		եկեղեցի	17-րդ դ.	S	ամրոցի հս մասում, կիսավեր
2.		ԱՄՐՈՑ «ԱՐՏԱՆԻՇ»	մթա 2-1 հզմ, 16-18-րդ դդ.	ամ մասում	Հ գյուղի եզրին, բլրի հվ ստորոտին
2.1.		գերեզմանոց	16-18-րդ դդ.	S	
	2.1.1	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	
	2.1.2	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	
	2.1.3	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	
	2.1.4	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	խրված հողի մեջ
	2.1.5	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	թեքված
	2.1.6	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	ընկած գետինին
	2.1.7	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	եզրերը՝ քայքայված
	2.1.8	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	
	2.1.9	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	թեքված
	2.1.10.	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	
	2.1.11.	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	
3.		ԱՄՐՈՑ «ԴԱՇՏ-ԼԵՌ»	մթա 1 հզմ	5 կմ հվ	Հ
4.		ԱՇՏԱՐԱԿ	մթա 2-1 հզմ	ամ մասում	Հ «Արտանիշ» ամրոցից 0,5 կմ հս
5.		ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	13-17-րդ դդ.	հվ մասում	S գյուղի եզրին, գյուղ մտնող ճանապարհից աջ
	5.1.	խաչքար	10-րդ դ.	Հ	
	5.2.	խաչքար	11-12-րդ դդ.	Հ	
	5.3.	խաչքար	1210 թ.	Հ	
	5.4.	խաչքար	15-16-րդ դդ.	Հ	
6.		ԴԱՄԲԱՐԱՆ	մթա 2-1	1 կմ հվ-	Հ Շողակաթ-Արտանիշ խճուղուց աջ



			հզմ	ամ		
7.		ԵԿԵՂԵՑԻ	17-րդ դ.	1 կմ հվ- ան	S	բլրի վրա, կիսավեր
	7.1.	խաչքար	1216 թ.		Հ	ընկած գետնին, երկատված
	7.2.	խաչքար	14-րդ դ.		Հ	ընկած գետնին
8		ԽԱՉՔԱՐ	10-11 դդ.	գյուղի մեջ	Հ	փոքր
9		ԽԱՉՔԱՐ	13-14 դդ.	գյուղի մեջ	Հ	մեծ

5.13. Բնության հուշարձաններ

Համաձայն կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման` Գեղարքունիքի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

Երկրաբանական

Սևկատար» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ
«Աժդահակ» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
«Անանուն» ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
«Արմաղան» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մաղինա գյուղից 3.5 կմ արմ
«Հայրավանք» բրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ
«Թառ (Կարմիր Կատար)» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գեղամա լեռնաշղթայի կենտրոնական-ջրբաժանային հատվածում, Աժդահակ հրաբխից հարավ-արևմուտք, Աժդահակ հրաբխին միանում է Կամուրջ հրաբխով

Ջրակառուցական

«Սարանց» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
«Խաչերի» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում
«Արցունք քար» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա
«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
«Վանքի աղբյուր» աղբյուրների	Գեղարքունիքի մարզ, Մարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից



խումբ	1977 մ բարձրության վրա
-------	------------------------

Զրագրական

«Ակնա» լիճ	Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արև, Ակնասար լեռան լանջին
------------	---

Կենսաբանական

«Ենթալայան մարգագետին»	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ
------------------------	---------------------------------------

Նշված պատմամշակութային և բնության հուշարձաններից ոչ մեկը չի գտնվում նախատեսվող գործունեության տարածքում:

6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ


«Դ ՎԵՆՉՈՒՐՄ» ՓԲ ընկերության կողմից նախաձեռնվող ցանկապատի և դարպասների կառուցման և տեղադրման համար հայցվող տարածքը տեղակայված է Սևանա Աճի ափին, «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ին պատկանող Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում և զբաղեցնում է ընդհանուր առմամբ 8.254հա մակերես, բաղկացած է երեք հողակտորից: Նշված տարածքների կադաստրային կոդերն են՝ 1. 05-074-1091-0060, 2. 05-074-1091-0058, 3. 05-074-1091-0076: Տարածքը հարակից է Սևան-Շողակաթ-Վարդենիս Մ14 ավտոճանապարհին: Դեպի տարածք տանող ճանապարհի գլխավոր մուտքն ապահովված է Սևան-Վարդենիս մայրուղային ճանապարհից: Կառուցապատվող հողամասը գոյություն ունեցող ասֆալտապատ ճանապարհից /որը 1905.00 նիշից վերև է/ գտնվում է մոտ 4 կմ հեռավորության վրա (ուղիղ գծով): Կառուցապատման տարածքի ամենաոտ հեռավորությունը Սևանա լճից կազմում է 10 մ:

Պատկեր 10: Հյացվող տարածքի մոտեցման ճանապարհներ



Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի
 ավիաներձ տարածքի 12-րդ փոքրոց 57, 58 և 59 հողամասեր
 հասցեում ցանկապատի կառուցման ՇՄԱԳ հաշվետվություն


Շրջակա միջավայրի վրա
 ազդեցության գնահատում
 2024թ. օգոստոս






Ցանկապատի տեղադրումը կատարվելու է համաձայն ՇՀ-ում գործող նորմատիվատեխնիկական և քաղաքաշինական փաստաթղթերի, մասնավորապես ՇՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N1563-Ն որոշման պահանջներին և ՇՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ հաստատված Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագծի պահանջներին համապատասխան:

Շինարարական աշխատանքները ներառում են մետաղական սյուների տեղադրում, ցանցային պարսպապատում և մետաղական դարպասների տեղադրում: Մետաղական ցանկապատի սյուների և մետաղական դարպասի տեղադրումն իրականացվելու է առանց բետոնային ամրացումների: Տարածքի ռելիեֆը հարթ բլրային է՝ ափսեաձև իջվածքներով, աննշան կոնաձև իջվածքներով: Ցանկապատը և դարպասները բաղկացած են լինելու մետաղական ցանցից և մետաղական խողովակներից: Մանրամասները ներկայացված են ստորև.

Պատկեր 11: Հայցվող տարածքի քարտեզ-սխեմաներ





Ներկայացվող ցանկապատը չի ներառում կապիտալ շինարարական աշխատանքներ:



Տարածքում առկա ծառաթփային բուսականությունը չի վնասվելու: Ներկայացվող ցանկապատը տեղադրվելու է ուղղահայաց կանաչապատմամբ (մինչև 1,5 մետր բարձրությամբ): Այլ շինարարական աշխատանքներ նախատեսված չեն:

Տարածքի կառուցապատումը կատարվելու է համաձայն՝ «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերին» համապատասխան: Մինչև շարժական տնակների տեղադրումը տարածքում կատարվելու է մաքրման աշխատանքներ՝ քարերից, կենցաղային աղբի մնացորդներից, առանց լանդշաֆտը խախտելու:

Ստորև ներկայացված են տարածքի նիշերի մանրամասն սխեման և կոորդինատային տվյալները՝ աղյուսակային տեսքով.

Պատկեր 12: Տեղանքի նիշերի քարտեզ-սխեմա



	Կոորդինատներ			Կոորդինատներ	
	X	Y		X	Y
1	8525643.6875	4481182.5621	11	8525447.5967	4481266.9708
2	8525632.5516	4481256.4791	12	8525438.2969	4481266.2712
3	8525614.9179	4481257.6665	13	8525432.7640	4481265.6928
4	8525572.9706	4481260.5417	14	8525450.8706	4481108.9844
5	8525506.8936	4481265.1415	15	8525451.9274	4481099.8375
6	8525471.2143	4481267.4450	16	8525453.0286	4481090.3075
7	8525458.4705	4481269.2751	17	8525462.1476	4481011.3847
8	8525452.7284	4481272.2784	18	8525670.5657	4480997.1972



9	8525436.2819	4481285.6003	19	8525660.8460	4481067.0446
10	8525437.3805	4481282.6003	20	8525657.8851	4481088.3219

Կոորդինատային տվյալները տրամադրվել են ՀՀ Կադաստրի Կոմիտեի կողմից (Տեղեկանք N US-22052023-99-0049 քարտեզագրական նյութերի վերաբերյալ)

6.1 Ջրամատակարարում և կոյուղի

Ներկայացվող գործունեության համար խմելու ջրի մատակարարումը կիրականացվի 20 լ տարաներով: Հաշվի առնելով աշխատանքների կարճ ժամկետը և բնույթը, տեղում կենցաղային այլ պայմաններ չեն նախատեսվում: Այդ նպատակով Շողակաթ գյուղում վարձակալվելու է տուն:

7. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի այլընտրանքային տարբերակները դիտարկվում են երկու առումով:

7.1. «Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակ

«Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակը վերաբերում է այն իրավիճակին, երբ որևէ գործունեություն չի իրականացվում: Ոչ մի գործողություն այլընտրանքային տարբերակը չի ունենա բացասական հետևանքներ, սակայն մյուս կողմից չի նպաստի նաև տարածաշրջանում զբոսաշրջության զարգացմանը և մարդկանց հանգստի ապահովմանը:

«Ոչ մի գործողություն» տարբերակը՝ չի համարվում կենսունակ կամ ընդունելի այլընտրանքային տարբերակ առաջարկվող ծրագրին:

7.2. Ծրագրի առավելությունները

Ծրագիրը նպատակ ունի սահմանազատել վարձակալված հողատարածքները մետաղական ցանցով, որի իրականացման դեպքում չեն իրականացվելու մեծաքանակական հողային աշխատանքներ և/կամ այլ տիպի գործողություններ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ տեղանքի վիզուալ ասպեկտների վրա: Պլանավորված Ծրագիրը նախատեսված է հասնելու հետևյալին.

- սահմանազատել ներկայացված հողատարածքները մետաղական ցանցով;
- պահպանել և բարեգարկել տեղանքի ընդհանուր վիճակը;
- իրականացնել տարածքի մաքրություն և բարեկարգում;
- մասնակցել համայնքի սոցիալական զարգացման ծրագրերում:

Ծրագիրը կիրականացվի համայնքի անվտանգության և բարեկեցության համար առավելագույն հոգատարությամբ և հնարավորության դեպքում տեղական աշխատուժի ներգրավմամբ:

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ



Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը բացահայտելու, վերլուծելու և գնահատելու նպատակով անհրաժեշտ է նույնականացնել բոլոր այն գործընթացները, սարքավորումները, օգտագործվող նյութերն ու ռեսուրսները, որոնք յուրաքանչյուրն առանձին կամ որաշակի գույակցմամբ կարող են առաջացնել օդային և ջրային ավազաններ վնասակար նյութերի արտանետումներ և արտահոսքեր, վտանգավոր թափոններ, ինչպես նաև ազդել տարածաշրջանի կենսաբազմազանության վրա:

Մթնոլորտային արտանետումներ կառաջանան գործունեության իրականացման շինարարական փուլում:

Արտանետումները ներառում են օդի որակը աղտոտող նյութերը, մասնավորապես՝ փոշու, շինարարական տեխնիկայի դիզ. վառելիքի այրման արդյունքում առաջացող արտանետումները:

Փոշու շատ կարճաժամկետ և շատ քիչ քանակով արտանետումներ կառաջանան շինարարության աշխատանքների ժամանակ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ մթնոլորտային օդի որակի վրա և հարակից տարածքներում հանգստացողների վրա: Շինարարական աշխատանքների ժամանակ մեքենաների արտանետումները որոշակի ազդեցություն կունենան տվյալ տեղանքի մթնոլորտային օդի որակի վրա, չնայած, այդ ազդեցությունն այնքան քիչ կլինի, որ հնարավոր չի լինի այն բացահայտել: Օդի նշանակալի աղտոտում չի սպասվում, եթե շինարարության պատշաճ գործելակերպ և սարքավորում կիրառվի: Կարևոր է նաև հաշվի առնել, որ հողային աշխատանքներ գրեթե չեն իրականացվելու, ուստի ազդեցությունները լինելու են կարճաժամկետ և ոչ էական:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված են բոլոր այն միջոցառումները, որոնք միտված են մեղմելու շինարարական փուլում առաջացող վնասակար ազդեցությունները: Շինարարության ժամանակ կպահպանվեն անվտանգության, տեխնիկայի և հակահրդեհային կանոնները և նորմերը:

8.1 Մթնոլորտային օդ

ա) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները առաջանում են հիմնականում լեռնային զանգվածի հանման և ավտոինքնաթափ մեքենաների բեռնման ժամանակ:

Հաշվարկները կատարված են գործող մեթոդակարգի համաձայն /15/:

$$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600 \text{ գ/վրկ (բանաձև 1), որտեղ}$$

P₁ - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտներում, 0.05

P₂ - 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P₃ - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.0

P₄ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.8

P₅ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.6

P₆ - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G – հանվող և ետ լցվող հողագրունտի քանակը, տ/ժամ:

Ըստ նախնական գնահատման հողագրունտի ծավալը կկազմի՝ 110 մ³, հաշվի
առնելով հողագրունտի տեսակարար կշիռը՝ 1.6 տ/մ³

$$110 \text{ մ}^3 \times 1.6 \text{ տ/մ}^3 = 176 \text{ տ}$$

Շինարարական աշխատանքները կունեն 22 օր, 8 ժամ, այստեղից՝

$$176 \text{ տ} : 22 \text{ օր} : 8 \text{ ժամ/օր} = 1.0 \text{ տ/ժամ:}$$

$$Q_1 = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.8 \times 0.6 \times 1.0 \times 10^6 \times 0.5 \times 1.0) / 3600 = 0.067 \text{ գ/վրկ:}$$

Արտանետումների տարեկան քանակը արդյունքում կկազմի՝

$$0.067 \text{ գ/վրկ} \times 22 \text{ օր} \times 8 \text{ ժամ/օր} \times 3600 \text{ վրկ/ժամ} : 10^6 \text{ գ/տ} = 0.042 \text{ տ:}$$

ա) Դիզելային վառելիք այրման արգասիքները

Շինարարական աշխատանքները կատարվելու են ձեռքով: Աշխատանքների համար շինանյութերը, ցանցը, խողովակները, անձնակազմը տեղափոխվելու են դիզելային վառելիքով աշխատող տրանսպորտային միջոցներով:

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են “Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման” մեթոդական հրահանգի¹ հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13: Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO _x	CH	ՑՕՍ	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Դիզվառելիքի օրական ծախսը կկազմի՝ 20 լ, ամբողջ ընթացքում՝

$$20 \text{ լ/օր} \times 22 \text{ օր} = 440 \text{ լ, կամ } 380 \text{ կգ}$$

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 14-ում: Աղյուսակում միավորվել են ածխաջրածինները, ինչպես նաև ազոտի օքսիդները:

Աղյուսակ 14: Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումներ

¹ Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը “Քոռ ինվեստորի օֆ էմիշնս ին Երոփ” (այսուհետ՝ CORINAIR)՝ “Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում” մեթոդոլոգիային համապատասխան

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները, տ
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	36.4	0.0135
	CH	8.4	0.003
	NOx	42.3	0.0156
	ՊՄ	4.3	0.0016

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են էլնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը՝
ESO₂ = 2Σksb, որտեղ՝

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 0.37 տ

SO₂ = 2 x 0.37 x 0.002 = 0.0015 տ/տարի:

Արտանետումների ամփոփ քանակները բերված են աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15: Արտանետումների ամփոփ քանակները

№	Արտանետվող նյութի անվանումը	Արտանետումները, տ
1	Անօրգանական փոշի	0.042
2	Ածխածնի օքսիդ	0.0135
3	Ածխաջրածիններ սահմանային	0.003
4	Ազոտի երկօքսիդ	0.0156
5	Պինդ մասնիկներ /մուր/	0.0016
6	Ծծմբային անհիդրիդ	0.0015

Ինչպես երևում է աղյուսակից, արտանետումների քանակները շատ փոքր են և չեն կարող ունենալ որևէ չափելի ազդեցություն:

8.2. Ջրային ռեսուրսներ

Շինարարության փուլում աշխատողներին մատակարարվելու է շշալցված խմելու ջուր՝ ըստ պահանջի: Այլ ազդեցություն չի նախատեսվում:

8.3. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում



Ցանկապատի և մետաղական դարպասների կառուցման ժամանակ կիրականացվեն փոքր ծավալով հողային աշխատանքներ: Աշխատանքները կտևեն մոտ 2-3 ամիս: Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ}} = (n \times N + n1 \times N1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 1 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n1– աշխատողների թվաքանակն է՝ 2 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 22 օր

$$W_{\text{խ.տ.}} = (1 \times 0.016 + 2 \times 0.025) \times 22 = 1.452 \text{ մ}^3/\text{շին. ժամ.}:$$

Շինարարության փուլում օգտագործվելու են նաև շինարարական նյութեր՝ մետաղական խողովակներ, դարպասներ, մետաղական ցանց:

Շինարարության ընթացքում բացառվելու են ՀՀ կառավարության 2002թ.-ի հունվարի 24-ի «Սևանա լճի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ ամրագրված նյութերի օգտագործումը:

8.4 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ

Գործունեության շինարարության ժամանակաշրջանում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ: Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը բերված է ստորև.

- Բեռնատար ինքնաթափ -1 հատ
- Էլ. եռակցման սարք - ըստ պահանջի
- Ձեռքի էլեկտրական գործիքներ
- Ձեռքի մեխանիկական գործիքներ
- Ատաղձագործական գործիքներ
- Ներկարարական գործիքներ:

Վերջիններս լինելու են Կապալառու կազմակերպության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաները կայանվելու են Շողակաթ բնակավայրի տարածքում: Մեքենաների վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է



շինարարականից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

8.5 Աղբահեռացում

Շինարարության փուլում շինարարական աղբը (չնչին քանակություններ) կուտակվելու է համապատասխան անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և Կապալառու կազմակերպության կողմից տեղափոխվելու է համայնքի կողմից տրամադրված աղբավայր: Իսկ կենցաղային աղբը կուտակվելու է աղբահավաք տարողության մեջ, պարբերաբար հեռացվելու է մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

8.6 Բնապահպանական և սոցիալական ազդեցությունները

Ծրագրի շինարարության փուլում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները ներկայացվում են ստորև:

Շրջակա միջավայրի օդի աղտոտում

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանում են անօրգանական փոշու արտանետումներ: Սակայն անհրաժեշտ է նշել, որ փոշու քանակը կլինի չնչին:

Ավտոտրանսպորտի աշխատանքի ընթացքում առաջանում են դիզելային վառելիքի այրման ծխագազերի արտանետումներ: Եռակցման աշխատանքների ընթացքում առաջանում են եռակցման աերոզոլի և մանգանի օքսիդների արտանետումներ: Այս բոլոր արտանետումները կլինեն շատ քիչ և չեն ունենա էական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա:

Ջրային ռեսուրսների վրա ազդեցություններ

Ընդհանուր առմամբ, շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները չեն սպասվում:

Ջրօգտագործում և ջրահեռացում

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է միայն աշխատողների խմելու նպատակների համար: Քանի որ տեղում կենցաղային հարմարություններ չեն նախատեսվում, արտահոսք չի լինելու:

Հողային աշխատանքներ

Հողային աշխատանքներ իրականացվելու են չնչին ծավալներով:

Կենսաբազմազանություն

Գործունեության ենթակա տարածքը մասնակի ծառապատված է ափամերձ



հատվածում: Տարածքը նախկինում օգտագործվել է որպես լողափ, ուստի արդեն ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Նշվածով պայմանավորված տարածքում չկան կենդանիների բնադրավայրեր, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքերում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ:

Ըստ բուսաբանական հետազոտությունների, ծրագրի համար նախատեսված տարածքներում գտնվող բուսատեսակները ընդգրկված չեն ՀՀ Կարմիր Գրքում:

Կարևոր է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ ներկայացված տարածքի հարևանությամբ գործունեություն են ծավալում մի քանի կազմակերպություն, օրինակ՝ «Կենսաբար Սոճի», «Shorja Painters Pansionat», «Arnavan Resort Complex» և այլն: Վերը նշվածը ցույց է տալիս, որ տեղանքը բավականին երկար ժամանակ ենթարկվել է մարդածին ազդեցության, ինչը ցույց է տալիս, որ տեղանքում բացակայում են Կարմիր գրքային կենդանատեսակները և բուսատեսակները:

Շինարարական թափոնների առաջացում

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, ծրագրի ազդակիր տարածքում առաջացող երկու տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանա շինարարական աղբ և կենցաղային թափոններ:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ճածակագիրը՝ 9120040001004/՝ 60 կգ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր:

Շինարարական աղբը հիմնականում պարունակելու է եռակցման խարամ՝ /ճածակագիրը՝ 3140480001994 /, 22 կգ քանակով կհավաքվի պլաստիկ պարկերի մեջ և կտեղափոխվի համայնքի ղեկավարի կողմից հատկացված վայր:

Հաշվի առնելով տարածքի զգայուն էկոհամակարգը, ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրկանացվի մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների առաջացումը:

Աղմուկ և թրթռում

Ներկայացված Ծրագրի իրականացման շրջանակներում ազդեցությունը մերձակա բնակավայրերի վրա գնահատվում է որպես թույլ: Որոշակի աղմուկի ավելացում կնկատվի բուն աշխատանքների ժամանակ, սակայն այն կլինի ոչ էական և հատուկ միջոցառումներ չեն նախատեսվում:

8.7 Պատմամշակութային հուշարձաններ



2011 թ. -ի մարտի 3-ին ՀՀ կառավարության կողմից N 177-Ն որոշմամբ հաստատվել է ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԼԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ-ը, որտեղ յուրաքանչյուր ռեկրեացոն գոտու համար նշված են մշակութային և հնագիտական հուշարձանների մասին տեղեկատվությունը: Գործունեության իրականացման արդյունքում որևէ պատմամշակութային կամ բնական հուշարձան չի ենթարկվի ազդեցության:

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:

8.8 Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխման կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

Սոցիալական միջոցառումներ

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- Թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս:
- Վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ:
- Որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ:

8.9 Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները ներառում են.



- Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նշանակել պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:
- Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար՝ ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ:
- Ապահովել շինհրապարակում աշխատողների համար հանգստի պայմաններ (քանի որ Շողակաթ բնակավայրը գտնվում է մոտ ներկայացված տարածքին, աշխատողները կօգտվեն բնակավայրի կենցաղային պայմաններից):
- Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:
- Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժօգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:
- Անձնակազմը պետք է ապահովվի համապատասխան արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով:
- Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել գրանցամատյանում:
- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ):
- Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը շխատանքներն իրականացնել այնպես, որ նվազագույնի հասցվի ազդեցությունը հարևան հանգստացողների և շրջակա տարածքների վրա:
- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:
 Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

8.10 Հակահրդեհային միջոցառումներ

- Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է՝
- Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:



- Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:

- Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում կարևորվում է ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

8.11 Բարեկարգում և կանաչապատում

Բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության: Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել:

Գործունեության իրականացման ընթացքում ծառաթփային բուսականություն չի վնասվելու: Առկա ավիամերձ հատվածի ծառերը և թփերը չեն ենթարկվելու որևէ ազդեցության: Մնացած հատվածներում ծառաթփային բուսականությունը բացակայում է: Սույն գործունեության իրականացման արդյունքում տարածքի կանաչապատում նախատեսված չէ:

9. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ՋԱԳ + ՕԱԳ ,$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով

(բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում,



Էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Քանի որ ներկայացվող գործունեության ընթացքում ջրային ռեսուրսների կամ հողածածկի աղտոտում չի սպասվում, հաշվարկվում է միայն մթնոլորտային օդին հասվող վնասը:

Տնտեսական վնասը շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \sum_{i=1}^n \Phi_i \cdot \sum_{j=1}^m \Psi_j \cdot \Phi_j$$

U -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով, Շգ -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի անշարժ աղբյուրների համար գործակիցն ընդունվում է հանգստի գոտիների համար՝ 10:

Փգ-ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն $\Phi_g = 1000$ դրամ:

Ψ_i -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է:

Φ_i -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,



Ք_i գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով`

$$\text{Ք}_i = q (3 \text{SU}_i - 2 \text{ՍԹՍ}_i), \text{SU}_i > \text{ՍԹՍ}_i (2)$$

որտեղ`

ՍԹՍ_i -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է`
տոննաներով:

SU_i -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են` տոննաներով:

Հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումների մթնոլորտում ցրման
հաշվարկները ցույց տվեցին, որ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները
գտնվում են թույլարտելի նորմերի սահմաններում, Ք_i = SU_i

q = 1` անշարժ աղբյուրների համար,

q = 3` շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական
ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Արտանետումների քանակները վերցվել են աղյուսակ 15-ից:

Աղյուսակ 16:

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Վ	Շգ	Տնտեսական վնասը. ՀՀ դրամ Ս = Շգ Փց Σ Վ _i Ք _i
	Si	q	Ք _i =Si x q			
Հանքային փոշի	0.042	1	0.042	10	10	4200
Ածխածնի օքսիդ	0.0135	3	0.0405	1	10	405
Ածխաջրածիններ	0.003	3	0.009	3.16	10	284
Ազոտի երկօքսիդ	0.0156	3	0.0468	12.5	10	5850
Պ.Ս. /մուր/	0.0016	3	0.0048	41.5	10	1992
Ծծմբային անհիդրիդ	0.0015	3	0.0045	16.5	10	743
Ընդամենը						13474

Ծրագրի իրականացման արդյունքում հաշվարկված տնտեսական վնասը կկազմի`
13474 դրամ: Այս ցուցանիշը ևս մեկ ապացույց է ազդեցության շատ ցածր
մակարդակի մասին:

10. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք
բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական
կառավարման պլանում և կազմակերպել է իրականացվող աշխատանքների
մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու
շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների
նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման,



շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում կիրականացվեն մշտադիտարկումների միջոցառումներ և ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (մեկ անգամ մեկ ամսվա ընթացքում): ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են գործունեության ազդեցության, նախատեսվում է իրականացնել արտաքին զննում և ետնախազդային մոնիթորինգ՝ նույնպես արտաքին զննման եղանակով:



11. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախատեսվող գործունեության վերաբերյալ 1-ին փուլի հանրային ծանուցումը և քննարկումները կազմակերպվել և իրականացվել են 2023թ-ի սեպտեմբերի 7-ին ժամը 15:00-ին՝ ՀՀ կառավարության 19.11.2014թ-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ խոշորացված համայնքի Արտանիշ բնակավայրում՝ վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային ծանուցման և քննարկումների մասին պատշաճ կերպով ծանուցվել է հանրությունը (1-ին փուլի հանրային ծանուցման և քննարկումների մասին հայտարարությունը հրապարակվել է <<Առավոտ>> օրաթերթում, որը կցվում է) և համայնքը (պաշտոնապես՝ էլ-փոստի գրությամբ): 1-ին փուլի հանրային ծանուցման և քննարկումների վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն և համայնքի կողմից տրամադրվել է նախնական համաձայնության մասին պաշտոնական գրություն:

Բացի վերը նշված հանդիպումից, փորձաքննական գործընթացի շրջանակներում կազմակերպվել և իրականացվել են ևս 2 հանրային քննարկումներ, որոնց մանրամասները ներկայացված են ստորև.

2-րդ հանրային քննարկում

Սույն թվականի մարտի 12-ին ժամը 15.00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Դ ՎԵՆՉՈՒԻՐՍ» ՓԲ ընկերության կողմից ՀՀ Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի ավիամերձ տարածքի 12-րդ փողոց, 57, 58 և 59 հողամասեր հասցեում նախատեսվող ցանկապատի կառուցման վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և փորձաքննության վերաբերյալ հանրային քննարկումների (երկրորդ հանրային քննարկում) նիստը:

Ներկա էին Շողակաթ բնակավայրի վարչական ղեկավարը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ /այսուհետ՝ ՊՈԱԿ/, «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ, ձեռնարկողի՝ «Դ ՎԵՆՉՈՒԻՐՍ» ՓԲԸ, «Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչները և բնակիչները (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքն ասաց Շողակաթ բնակավայրի վարչական ղեկավար Նաիրի Պողոսյանը: Նա ողջունեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց բոլորին ներկա գտնվելու համար, ներկայացրեց հանրային քննարկման առարկան, նշեց, որ սա



երկրորդ հանրային քննարկումն է: Շարունակելով ասաց, որ նախատեսվող գործունեության համար հողատարածքները գտնվում են «Սևան» ազգային պարկի տարածքում, հարևանությամբ գտնվում է նաև «Արտանիշ» արգելավայրը: Ավելացրեց, որ իր կարծիքով կենդանական և բուսական աշխարհի վրա ազդեցությունը կլինի նվազագույն: Այնուհետև խոսքը փոխանցեց ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյանին:

Վ. Հարությունյանը ներկայացավ, ներկայացրեց փորձաքննական ընթացակարգը, նշեց, որ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի այս գործունեությունը ենթակա է բնապահպանական փորձաքննության: Նա ասաց, որ հայտը կազմվել է օրենքի պահանջներին համապատասխան: Ավելացրեց, որ հայտն ուղարկվել է կարծիքների՝ համապատասխան գերատեսչական մարմիններ, որի հիման վրա այն լրամշակվել է:

Այնուհետև ելույթով հանդես եկավ «Քոնսեկոարդ» ՍՊԸ աշխատակից Արման Խաչատրյանը: Նա հակիրճ ներկայացրեց նախատեսվող գործունեության բնույթը, դրա հետևանքով հնարավոր բնապահպանական ռիսկերը և դրանց մեղմանն ուղղված միջոցառումները: Նշեց, որ հողային աշխատանքներ չեն նախատեսվում, իրականացվելու է մետաղալարով ցանկապատում: Ավելացրեց, որ ներկայացված տարածքում Կարմիր գրքային կենդանատեսակներ և բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

Բնակիչներից մեկը հետաքրքրվեց, թե կոնկրետ ո՞ր հողատարածքների մասին է խոսքը:

Վարչական ղեկավար Ն. Պողոսյանը բովանդակալից նկարագրեց հողամասերի գտնվելու վայրը:

Բնակիչները հետաքրքրվեցին, թե ո՞րն է ցանկապատի նպատակը:

Ձեռնարկողի ներկայացուցիչ Վահրամ Կիրակոսյանն ասաց, որ իրենց կազմակերպությունը վարձակալել է նշված հողատարածքները և այս պահին նախատեսվում է մետաղալարով ցանկապատում իրականացնել՝ հետագա օգտագործման համար: Նա նշեց, որ տվյալ պահին որևէ կոնկրետ գործունեություն չի նախատեսվում իրականացնել:

Բնակիչ Գայանե Ղալեյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք նշված տարածքի ցանկապատման դեպքում հնարավոր կլինի շարունակել օգտվել լողափի տարածքից և հետաքրքրվեց, թե ի՞նչ ճանապարհներով հնարավոր կլինի մոտենալ ավին:

Ա. Խաչատրյանը և Վ. Կիրակոսյանը նշեցին, որ տարածքով անցնող արահետ-ճանապարհները բաց են լինելու: Նրանք նշեցին, որ ներկայացված գործունեության



իրականացման արդյունքում որևէ ճանապարհ չի փակվելու և բնակիչները անխոչնդոտ կարողանալու են մոտենալ լողափին թե՛ ոտքով, թե՛ մեքենաներով:

Ն. Պողոսյանը նշեց, որ ցանկապատը կառուցվելու է՝ պահպանելով օրենքով սահմանված համապատասխան հեռավորությունը ափից, և համայնքը հետևողական է լինելու այդ հարցին:

Բնակիչները մտահոգություն հայտնեցին նոր շենք-շինությունների կառուցման համար:

Ն. Պողոսյանը պատասխանեց, որ «Սևան» ազգային պարկի տարածքում կառուցապատման համար կա օրենքով սահմանված ընթացակարգ, ինչպես նաև «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ աշխատակիցները հետևողական են նմանատիպ հարցերին, հետևաբար ծածուկ որևէ կառուցապատումը բացառվում է:

Վ. Հարությունյանն հավելեց, որ հողատարածքները վարձակալության են տրվել մինչև 2032 թվականը:

Գ. Ղալեչյանն ասաց, որ ցանկապատման դեպքում գուցե հաշմանդամները կունենան բարդություններ լողափի հասանելիության պարագայում:

Ձեռնարկողի ներկայացուցիչ Վ. Կիրակոսյանն ասաց, որ ափ մոտեցող ճանապարհները բաց են լինելու նաև մեքենաների համար և ցանկացած մարդ հնարավորություն կունենա անխոչնդոտ մոտենալ լողափ:

Ն. Պողոսյանը հավելեց, որ բնակավայրի տարածքում առկա է նաև հանրային լողափ:

Ելույթի խոսքով հանդես եկավ նաև «Սևան» ազգային պարկի ներակայացուցիչը, նշելով, որ իրենք չունեն առարկություն ներկայացված գործունեության վերաբերյալ, բայց ունեցել են որոշակի նկատառումներ, որոնք հաշվի են առնվել Ձեռնարկողի կողմից:

Այնուհետև Ն. Պողոսյանը հետաքրքրվեց, թե ի՞նչ փոփոխություններ են եղել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտում:

Վ. Հարությունյանը պատասխանեց, որ Ձեռնարկողը ստացել է որոշակի դիտողություններ հայտի վերաբերյալ, որոնց հիման վրա հայտը ենթարկվել է լրամշակման: Նա նաև հավելեց, որ նախնական գնահատման հայտն առկա է ՇՄՆ պաշտոնական կայք էջում և հասանելի է բոլորին:

Ա. Խաչատրյանը նշեց, որ բնակիչները ազատ են իրենց հարցերը և առաջարկները ուղղել բոլոր համապատասխան մարմիններին ՇՄԱԳ գործընթացի ողջ ընթացքում:



Ն. Պողոսյանն ասաց, որ ինքն անձամբ հայտն ուսումնասիրել է և նկատել է, որ այնտեղ կան ներառված կենդանատեսակներ, որոնք տվյալ տարածքում բացակայում են:

Ա. Խաչատրյանը պարզաբանեց, որ հայտում ներկայացված է ոչ միայն կոնկրետ այդ տարածքի, այլև տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհը:

Ն. Պողոսյանն առաջարկեց նաև իրականացնել որոշակի սոցիալական ծրագրեր:

Ա. Խաչատրյանը դրական արձագանքեց, նշելով, որ այդ հարցը հնարավոր կլինի հստակեցնել Ծրագրի իրականացման փուլում:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին նիստը համարվեց փակված:

3-րդ հանրային քննարկում

Սույն թվականի ապրիլի 30-ին ժամը 15.00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Դ ՎԵՆՉՈՒԻՐՍ» ՓԲ ընկերության կողմից ՀՀ Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի ավիամերձ տարածքի 12-րդ փողոց, 57, 58 և 59 հողամասեր հասցեում նախատեսվող ցանկապատի կառուցման վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների (երրորդ հանրային քննարկում) նիստը:

Ներկա էին Շողակաթ բնակավայրի վարչական ղեկավարը, ձեռնարկողի՝ «Դ ՎԵՆՉՈՒԻՐՍ» ՓԲԸ, «Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչները և բնակիչները (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքն ասաց Շողակաթ բնակավայրի վարչական ղեկավար Նաիրի Պողոսյանը: Նա ողջունեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց բոլորին ներկա գտնվելու համար, ներկայացրեց հանրային քննարկման առարկան, նշեց, որ սա երրորդ հանրային քննարկումն է: Շարունակելով իր խոսքը, նա ասաց, որ հաշվետվության մեջ մանրամասն նկարագրված է շրջակա միջավայրի բուսական և կենդանական աշխարհը, և իր կարծիքով կենդանական և բուսական աշխարհի վրա ազդեցությունը կլինի նվազագույն՝ հաշվի առնելով գործունեության բնույթը: Նշեց, որ կարևոր է նվազագույնի հասցնել նախատեսվող գործունեության հետևանքով հնարավոր բնապահպանական ռիսկերը: Այնուհետև խոսքը փոխանցեց «Քոնսեկոարդ» ՍՊԸ ներկայացուցիչ Արման Խաչատրյանին:

Ա. Խաչատրյանը ներկայացավ, նշեց, որ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախատեսվող գործունեությունը ենթակա է բնապահպանական փորձաքննության: Այնուհետև մանրամասն ներկայացրեց նախատեսվող գործունեության բնույթը, դրա հետևանքով



հնարավոր բնապահպանական ռիսկերը և դրանց մեղմանն ուղղված միջոցառումները: Նշեց, որ հողային աշխատանքներ չեն նախատեսվում, իրականացվելու է մետաղալարով ցանկապատում: Շարունակելով իր խոսքը, նա նշեց, որ ներկայավող տարածքում և դրա անմիջական հարևանությամբ Կարմիր գրքային կենդանատեսակներ և բուսատեսակներ, ինչպես նաև պատմամշակութային հուշարձաններ չկան: Ա. Խաչատրյանն ասաց, որ հաշվետվության մեջ ներառված է «Բնապահպանական կառավարման պլան» բաժինը, որտեղ ներկայացված են նախատեսվող գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված համապատասխան միջոցառումները:

Բնակիչներից մեկը հետաքրքրվեց, թե ո՞ր հողատարածքների մասին է խոսքը:

Վարչական ղեկավար Ն. Պողոսյանը բովանդակալից նկարագրեց հողամասերի գտնվելու վայրը: Այնուհետև նա ևս մեկ անգամ ներկայացրեց նախատեսվող գործունեության բնույթը: Նշեց, որ նախորդ հանրային լսումների ժամանակ քննարկվել է, որ հնարավորության դեպքում մետաղական լարի ուղղությամբ կիրականացվի լրացուցիչ կանաչապատում, որը ողջունելի կլինի: Նա նաև կարևորեց նախաձեռնողի ներգրավվածությունը բնակավայրի սոցիալական ծրագրերին, նշելով, որ շին. Աշխատանքներում աշխատուժի ներգրավման ժամանակ նախապատվությունը պետք է տրվի տեղի բնակչությանը:

Բնակիչ Գայանե Ղալեչյանը հարցրեց, թե բնակիչները ի՞նչ ճանապարհներով կարող են է մոտենալ Սևանա լճի ափին:

Ա. Խաչատրյանը պատասխանեց, որ հարցը քննարկվել է նախորդ հանրային լսումների ժամանակը, և ինչպես նշվել է՝ բաց են լինելու տարածքով անցնող արահետ-ճանապարհները, ինչպես նաև ավտոմեքենաների համար նախատեսված ճանապարհը:

Քանի որ այլ հարցեր, առաջարկություններ և դիտողություններ չհնչեցին, Ն. Պողոսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Լուսանկարներ



Ներկայացված հանրային քննարկումների ամբողջական նյութերը ներկայացվել են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին:



ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հնարավոր բացասական ազդեցություն	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Պատասխանատու կազմակերպություն	Մեղմացնող միջոցառումների ժամանակը	Վերահսկող կազմակերպություն/պատասխանատու	Մեղմացնող միջոցառումների ծախսերը
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ					
Հողային ռեսուրսներ	<ul style="list-style-type: none"> - գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվելու, - շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա, - ավելցուկային գրունտ չի առաջանա, - հանված հողային զանգվածը կօգտագործվի հետլիցքի և տարածքի բարեկարգման համար 	Կապալառու	Աշխատանքները սկսվելուն պես հողային աշխատանքների ընթացքում	«Սևան» ԱՊ	ընթացիկ ծախսեր
Ազդեցություն կենսաբազմազանության վրա	<ul style="list-style-type: none"> - Բացառել ծառահատումները, գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել «Սևան» ԱՊ-ին, պահպանության միջոցառումներն իրականացնել 31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն որոշման պահանջներին համապատասխան - շինարարական աշխատանքներն իրականացնել 	Կապալառու	Աշխատանքները սկսվելուն պես և հողային աշխատանքների ընթացքում	«Սևան» ԱՊ	ընթացիկ ծախսեր



	ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:				
Շինարարության ընթացքում թափոնների առաջացում և կառավարում	<ul style="list-style-type: none"> - շինհրապարակում առաջացող թափոնները ժամանակավոր կուտակել բնապահպանական տեսանկյունից առավել ընդունելի վայրերում և հեռացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով - կենցաղային թափոնների և շինարարական աղբի տեղադրում համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված - արգելել ցանկացած տեսակի թափոնների բացօդյա այրումը - շինանյութերը ձեռք բերել լիցենզավորված մատակարարներից 	Կապալառու	Շին.աշխատանքների ընթացքում, հեռացնել կուտակումից հետո 3-5 օրվա ընթացքում	«Սևան» ԱՊ	ընթացիկ ծախսեր
Օդի աղտոտվածություն՝ մեքենաների արտանետումներից և շինարարական փոշուց	<ul style="list-style-type: none"> - պահել մեքենաները և սարքավորումները համապատասխան տեխնիկական վիճակում՝ ավելորդ արտանետումներից խուսափելու համար - խուսափել շարժիչների անգործությունից - միշտ ծածկել շինարարական նյութերով և աղբով բեռնված բեռնատարները. - 	Կապալառու	Շին.աշխատանքների ժամանակ ըստ անհրաժեշտության և կիրառելիության	«Սևան» ԱՊ	ընթացիկ ծախսեր



<p>Շինարարության հետ կապված ժամանակավոր ազդեցություններ</p> <p>Աղմուկ և փոշի</p>	<p>Շինարարության և սարքավորումների աշխատանքի հետևանքով առաջացող փոշու և աղմուկի ազդեցությունը մեղմելու նպատակով հարկավոր է. աղմկոտ աշխատանքները իրականացնել ցերեկվա ժամերին,</p> <ul style="list-style-type: none"> - մեքենաների շարժիչները պարբերաբար ստուգել և անհրաժեշտության դեպքում կարգաբերել 	<p>Կապալառու</p>	<p>Շին. աշխատանքներ իմեկնարկին զուգընթաց և աշխատանքների ընթացքում</p>	<p>«Սևան» ԱՊ</p>	<p>ընթացիկ ծախսեր</p>
<p>1. Առողջական խնդիրներ</p> <p>Պատահարներ շինարարական հրապարակում</p>	<ul style="list-style-type: none"> - աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու կամ դրանցից խուսափելու համար, կկիրառվեն հետևյալ մեղմացնող միջոցառումները. - ապահովել, որ բանվորները և տեղանքի ցանկացած այցելու ապահովված լինի և օգտագործի անձնական պաշտպանիչ արտահագուստ, - ապահովել, որ բանվորները անվտանգության վերապատրաստում անցնեն - ապահովել, որ շինարարական սարքավորումները ստուգված և լիցենզավորված լինեն, - ապահովել, որ շինարարական տեխնիկան օգտագործվի խստորեն հետևելով շահագործման հրահանգներին, - ունենալ առաջին օգնության բժշկական փաթեթներ և հակահրդեհային սարքավորումներ, - աշխատանքային ժամերից դուրս արգելել գործունեությունը տեղանքում, 				



	<p>անհայտ գտածոներ հայտնաբերելու դեպքում դադարեցնել աշխատանքները և այդ մասին հայտնել համապարտասխան մարմիններին</p>				
<p>2. Արտակարգ իրավիճակներ</p>	<p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շին. հրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով կամ շանթարգելներով, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են, - շինարարական նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար: 	<p>Արտակարգ</p>	<p>Գործունեության ընթացքում -</p>		



ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ

Մույն մշտադիտարկման պլանը կօգտագործվի Բնապահպանական կառավարման պլանի (Հավելված 1) իրականացման համապատասխանությունը որոշելու նպատակով

Մեղմացնող միջոցառումներ	Մոնիտորինգի ցուցանիշներ	Մոնիտորինգի ժամանակը/ հաճախականությունը	Մոնիտորինգի մեթոդները	Վերահսկող կազմակերպություն
Շինարարության փուլ				
Հողային աշխատանքներից հանված գրունտը ժամանակավոր տեղադրվում է բուսականությունից ազատ տարածքներում և խողովակաշարը տեղադրելուց հետո անմիջապես օգտագործվում հետլիցքի համար	Հողային աշխատանքների տեսողական հայտնաբերում	Հողային աշխատանքների ժամանակ	Տեսողական ստուգում	Տեխնիկական վերահսկողը
Շին.մեքենաները շարժվում են տեղական գոյություն ունեցող ճանապարհներով կամ ժամանակավոր մոտեցնող ճանապարհներով, չանցնելով անկանոն կերպով հողային մակերեսների վրայով	Շինարարության տարածքում և դրա շուրջը հողային մակերեսների տեսողական հայտնաբերում	Շինարարության ընթացքում	Տեսողական ստուգում	Տեխնիկական վերահսկողը



ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

84 և 047



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «24» Հունիսի 2014 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

Ղ ԿԵՆՉՈՒՐՍ ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏԵՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Շորժա 12-րդ փողոց 58 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի վաճառքի պայմանագիր 19.06.2014թ.

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲԵՆԻԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-074-1091-0071

Սակերեսի չափը (հա)՝ 0.279

Նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնապահպանական
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ





5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Ի Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
------------------------------	--------	------------------	---------------------------

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Կառուցապատման իրավունքը տրամադրված է մինչև 16.11.2027թ.:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Վալերիկ Սարգսյան
 զբաղեցրած պաշտոնը՝ Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր
 ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը
 տրամադրող սպասարկման գրասենյակի
 Կ.Տ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «24» Հունիսի 2014 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑԿԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

Դ ՎԵՆՉՈՒՐԱ ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆԿԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Շորժա 12-րդ փողոց 57 հողամաս

3. ԳՐԱՆՑԱՆ ՀԱՍԱՐ ՀԻՍՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առավաճառքի պայմանագիր 19.06.2014թ.

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-074-0000-0000

Մակերեսի չափը (հա)՝ 2.525

Նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնապահպանական

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ





5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
-----	-----------------------	--------	---------------	---------------------------

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Խաչատուր Դադոյան
 զբաղեցրած պաշտոնը՝ Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ
 ռեգիստր

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը
 տրամադրող անհատական գրասենյակի
 Կ.Տ.





ՆՅՂՆԿԵ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «11» Հունիսի 2014 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑԿԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

Դ ՎԵՆՉՈՒՐՍ ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏԼՎԵԼՈՒ ԿԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Շորժա 12-րդ փողոց 59 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՍՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Կառուցապատման իրավունքի առուվաճառքի պայմանագիր 06.06.2014թ.

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲԵՌԻԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-074-0224-0060

Սակերեսի չափը (հա)՝ 5.45

Նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնապահպանական

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ



5. ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/ի	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
-----	-----------------------	--------	---------------	---------------------------

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Կալերիկ Մարգարյան
 զբաղեցրած պաշտոնը՝ Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր
 ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը
 տրամադրող քաղաքական գրասենյակի
 Կ.Տ.





ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՏԵՂԵԿԱՆՔ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԳԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

22/05/2023թ.

N IIS-22052023-99-0049

զաղտնարտ՝ 44HIV617520

Դիմող

ԿԱՐԵՆ ԱՎԱԳՅԱՆ, ԿԱՌԼԵՆԻ

Ի պատասխան Ձեր 18/05/2023-26-0021 դիմումի կից արամադրում ենք պահանջվող տեղեկատվությունը գործող կադաստրային քարտեզից:

հայտնում ենք, որ թիվ 11062014-05-0023 սեփականության վրայակառուցված 05-074-0224-0060 կադաստրային համկազրով հողամասին Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի գործող կադաստրային քարտեզում համապատասխանում է 05-074-1091-0060 կադաստրային ծածկագրով հողամասը: Այժմամասնակ հայտնում ենք, որ թիվ 05-074-1091-0060 կադաստրային ծածկագրով հողամասը հնարավոր չէ տպագրել 1:500 մասշտաբով A4, A3 ձևաչափի թղթի վրա, քանի որ հողամասի մակերեսը մեծ է:

Առդիր 1 էլեկտրոնային ֆայլ, 1 տպագրված թերթ:

*Տեղեկանքը կազմվել է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի մասնագետ
ԱՆՆԱ ՄԻԲԱՅԵԼԹԱՆԻ կողմից*

**Մյուս տեղեկանքը հատարաված է էլեկտրոնային եղանակով տեղեկանքը կազմող պաշտոնատար անձի կողմից:*

Ընդունվել է



Գեղարքունիքի մարզ
 Շողակաթ համայնք
 Հատված կադաստրային քարտեզից
 Կադաստրային ծածկագիր՝ 05-074-1091-0060
 Մասշտաբ 1: 2000



Կոորդինատներ			Կոորդինատներ		
	X	Y		X	Y
1	8525643.6875	4481182.5621	11	8525447.5967	4481266.9708
2	8525632.5516	4481256.4791	12	8525438.2969	4481266.2712
3	8525614.9179	4481257.6665	13	8525432.7640	4481265.6928
4	8525572.9706	4481260.5417	14	8525450.8706	4481108.9644
5	8525506.8936	4481265.1415	15	8525451.9274	4481099.8375
6	8525471.2143	4481267.4450	16	8525453.0286	4481090.3075
7	8525458.4705	4481269.2751	17	8525462.1476	4481011.3847
8	8525452.7284	4481272.2784	18	8525670.5657	4480997.1972
9	8525436.2819	4481285.8003	19	8525660.8460	4481067.0448
10	8525437.3805	4481282.8003	20	8525657.8851	4481088.3219

Սպասարկման գրասենյակ

